

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել,
մանրամասների և ամբողջական պայմանների համար դիմել՝

«Ամերիաբանկ» ՓԲԸ

ameriabank.am | 010 56 11 11

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 2,

Էլ. հասցե՝ office@ameriabank.am

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից

Ընդհանուր դրույթներ

- Վճարային քարտերի սպասարկման ընթացքում ՀՀ դրամով արտահայտված վճարների մուտքագրումները և գանձումները իրականացվում են ՀՀ ԿԲ կողմից հայտարարված արժույթային շուկայում ձևավորված միջին փոխարժեքով:
- Քարտային գործարքների նկատմամբ կիրառվում են «Ամերիաբանկ» ՓԲԸ /այսուհետ՝ «Բանկ»/ [Վճարային քարտերի սպասարկման պայմաններ և օգտագործման կանոններ](#) փաստաթղթով սահմանված փոխարժեքները, ընդ որում Visa համակարգի կողմից կիրառվող փոխարժեքը ներառում է նաև Բանկի 2% միջնորդավճարը:
- Բանկային գործառնությունների կատարման հետ կապված փոստային, հեռագրային, հեռախոսային, տեlexսային և ֆաքսիմիլային կապի ծախսերը, ինչպես նաև երրորդ բանկի ծախսերը գանձվում են լրացուցիչ:
- Բանկը կարող է գործող սակագներում կատարել փոփոխություններ և լրացումներ, որոնց մասին Բանկը ծանուցում է հաճախորդներին՝ փոփոխությունների և լրացումների տեքստը Բանկի տարածքում կամ Բանկի ինտերնետային կայքում հասանելի դարձնելու միջոցով: Փոփոխությունները և լրացումներն ուժի մեջ են մտնում Բանկի կողմից սահմանված պահից, բայց դրանց մասին հաճախորդներին ծանուցելու օրվանից ոչ շուտ:
- Այն միջնորդավճարները, որոնք ենթակա են ԱԱՀ-ով հարկման, ներառում են նաև ԱԱՀ-ն
- Մինչև VISA Gold/Platinum/Infinite, Mastercard Gold/Platinum քարտատեսակների հետ փաթեթային տրամադրվող ծառայությունների դադարեցումը գործող տրամադրված Քարտի փաթեթների ներքո «Արտերկիր մեկնողի համար ապահովագրությունը» կշարունակի գործել մինչև այդ ապահովագրության պայմանագրում նշված ժամկետի ավարտը, իսկ Առաջնային անցաթղթի քարտը (Priority Pass)՝ մինչև 30.06.2023թ-ը ներառյալ, որից հետո Priority Pass քարտի կիրառումը կարգելափակվի Բանկի կողմից:
- Բանկի կողմից տրամադրված Ստիկերները գործում են մինչև 31.12.2024թ-ը ներառյալ, որից հետո դրանց կիրառումը կարգելափակվի Բանկի կողմից: Ընդ որում՝ Ստիկերների սպասարկման վճարը կգանձվի մինչև 31.12.2024թ-ի ժամկետի համար:

Ուժի մեջ է 07.06.23թ.-ից

N	Վարկային քարտ՝ արտոնյալ ժամկետով						
	Քարտի ենթատեսակ ¹	VISA Classic Mastercard Standard	Visa Digital ²	VISA Gold Mastercard Gold	VISA Platinum Mastercard Platinum	VISA Signature	VISA Infinite
	Քարտի արժույթ	ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար/Եվրո	ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար/Եվրո	ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար/Եվրո	ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար/Եվրո	4 տարի	ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար/Եվրո
	Քարտի գործողության ժամկետ	4 տարի	4 տարի	4 տարի	4 տարի	2 տարի	4 տարի
1	Քարտի թողարկում	Անվճար	Անվճար	Անվճար	Անվճար	Անվճար	Անվճար
2	Քարտի սպասարկում ¹⁵	5,000 ՀՀ դրամ տարեկան, MyAmeria համակարգով պատվիրելու դեպքում՝ 2,500 ՀՀ դրամ	Անվճար	2,000 ՀՀ դրամ ամսական/ 20,000 ՀՀ դրամ տարեկան, MyAmeria համակարգով պատվիրելու դեպքում՝ 10,000 ՀՀ դրամ տարեկան	3,000 ՀՀ դրամ ամսական/ 30,000 ՀՀ դրամ տարեկան, MyAmeria համակարգով պատվիրելու դեպքում՝ 20,000 ՀՀ դրամ տարեկան	6,000 ՀՀ դրամ ամսական/ 60,000 ՀՀ դրամ տարեկան, MyAmeria համակարգով պատվիրելու դեպքում՝ 50,000 ՀՀ դրամ տարեկան	10,000 ՀՀ դրամ ամսական/ 100,000 ՀՀ դրամ տարեկան, MyAmeria համակարգով պատվիրելու դեպքում՝ 75,000 ՀՀ դրամ տարեկան
3	Հավելյալ քարտի թողարկում	Անվճար	Անվճար	Անվճար	Անվճար	Անվճար	Անվճար
4	Հավելյալ քարտի տարեկան սպասարկում	2,500 ՀՀ դրամ	1,000 ՀՀ դրամ	10,000 ՀՀ դրամ տարեկան	15,000 ՀՀ դրամ տարեկան	30,000 ՀՀ դրամ	50,000 ՀՀ դրամ
5	PIN կոդի տրամադրում ծրարով (գանձվում է միայն նոր թողարկվող քարտերի դեպքում) ³	1,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ	-	1,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ	1,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ	1,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ	1,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ
6	PIN կոդի սահմանում OTP-ի կիրառմամբ (PIN-ի կորստի դեպքում)	500 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ	-	500 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ	500 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ	500 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ	500 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ
7	Քարտային հաշվի նվազագույն մնացորդ	Չի սահմանվում	Չի սահմանվում	Չի սահմանվում	Չի սահմանվում	Չի սահմանվում	Չի սահմանվում
8	Քարտային հաշվի մնացորդի վրա հաշվարկվող տարեկան տոկոսադրույք	0%	0%	0%	0%	0%	0%

¹ Մքրինգ համակարգով վարկավորման դեպքում վարկային գծի համար նոր բացվող քարտը տրամադրվում է Visa Classic կամ Mastercard Standard ենթատեսակով՝ անկախ հաստատված վարկի գումարից: Քարտը տրամադրվում են առանց տարեկան սպասարկման վճարի:

² Հաճախորդ կարող է ունենալ առավելագույնը 3 գործող Digital քարտ:

³ Մակագինը չի կիրառվում Մքրինգային վարկերի տրամադրման համար, Սմարթ հաշվի, ստիկերի և արտասահման առաքման համար բացվող քարտերի դեպքում:

9	Քարտի տրամադրում մեկ բանկային օրվա ընթացքում ⁴						
	ա) ՀՀ քաղաքացի հանդիսացող հաճախորդների համար	5,000 ՀՀ դրամ	-	5,000 ՀՀ դրամ	5,000 ՀՀ դրամ	5,000 ՀՀ դրամ	5,000 ՀՀ դրամ
	բ) ՀՀ քաղաքացի չհանդիսացող հաճախորդների համար	10,000 ՀՀ դրամ	-	10,000 ՀՀ դրամ	10,000 ՀՀ դրամ	10,000 ՀՀ դրամ	10,000 ՀՀ դրամ
10	Քարտի վերաթողարկում (քարտի ժամկետի լրացման, ՀՀ այլ բանկերի կողմից քարտի առգրավման, cvv կոդ չստանալու դեպքում)	Անվճար	Անվճար	Անվճար	Անվճար	Անվճար	Անվճար
11	Քարտի վերաթողարկում այլ պատճառներով	2,500 ՀՀ դրամ	2,500 ՀՀ դրամ	5,000 ՀՀ դրամ	5,000 ՀՀ դրամ	5,000 ՀՀ դրամ	5,000 ՀՀ դրամ
12	Քարտի վերաթողարկում այլ պատճառներով Ինտերնետ-Բանկինգ/Մոբայլ-Բանկինգ համակարգի միջոցով	1,500 ՀՀ դրամ	1,500 ՀՀ դրամ	3,000 ՀՀ դրամ	3,000 ՀՀ դրամ	3,000 ՀՀ դրամ	3,000 ՀՀ դրամ
13	Ամերիաբանկի բանկոմատների կողմից կլանված Ամերիաբանկի քարտերի արագացված գործընթացով վերադարձ	"Ամերիաբանկի մասնաճյուղի տարածքում գտնվող բանկոմատներ, որի պարագայում քարտերը տրամադրվում են նույն աշխատանքային օրվա ընթացքում` 500 ՀՀ դրամ Երևան քաղաքում և այն քաղաքներում, որտեղ առկա է Ամերիաբանկի մասնաճյուղ, որի պարագայում քարտերը տրամադրվում են 2 աշխատանքային օրվա ընթացքում` 1,500 ՀՀ դրամ Այլ բնակավայրերում, որի պարագայում քարտերը տրամադրվում են 5 աշխատանքային օրվա ընթացքում` 5,000 ՀՀ դրամ"					
	Ամերիաբանկի բանկոմատների կողմից կլանված այլ բանկերի քարտերի արագացված գործընթացով վերադարձ	"Ամերիաբանկի մասնաճյուղի տարածքում գտնվող բանկոմատներ, որի պարագայում քարտերը տրամադրվում են նույն աշխատանքային օրվա ընթացքում` 3,000 ՀՀ դրամ Երևան քաղաքում և այն քաղաքներում, որտեղ առկա է Ամերիաբանկի մասնաճյուղ որի պարագայում քարտերը տրամադրվում են 2 աշխատանքային օրվա ընթացքում` 5,000 ՀՀ դրամ Այլ բնակավայրերում, որի պարագայում քարտերը տրամադրվում են 5 աշխատանքային օրվա ընթացքում` 10,000 ՀՀ դրամ"					
14	Վարկային սահմանաչափի շտապ ակտիվացում (սահմանաչափի հաստատումից առավելագույնը մեկ ժամվա ընթացքում)	2,000 ՀՀ դրամ	2,000 ՀՀ դրամ	2,000 ՀՀ դրամ	2,000 ՀՀ դրամ	2,000 ՀՀ դրամ	2,000 ՀՀ դրամ
15	Քարտի բլոկավորում	Անվճար	Անվճար	Անվճար	Անվճար	Անվճար	Անվճար
16	Քարտի ապաբլոկավորում	Անվճար	Անվճար	Անվճար	Անվճար	Անվճար	Անվճար

⁴ Ծառայությունը գործում է Երևան քաղաքի Բանկի մասնաճյուղերում քարտ պատվիրելիս, ընդ որում պատվիրված քարտերը տրամադրվում են միայն Բանկի Կամար մասնաճյուղի կողմից: Եթե Հաճախորդը քարտի պատվիրման հայտը ներկայացրել է տվյալ բանկային օրվա մինչ ժամը 16:00-ն, ապա քարտը տրամադրվում է նույն բանկային օրը, իսկ եթե ժամը 16:00-ից հետո, ապա քարտը տրամադրվում է հաջորդ բանկային օրը:

17	Քարտի պահում միջազգային STOP-ցուցակում /7 օրվա համար/ ⁵	9,000 ՀՀ դրամ	-	9,000 ՀՀ դրամ	9,000 ՀՀ դրամ	9,000 ՀՀ դրամ	9,000 ՀՀ դրամ
18	Կանխիկի տրամադրման օրական գործարքների առավելագույն ընդհանուր գումարը	1,000,000 դրամ/3,000 ԱՄՆ դոլար/3,000 եվրո	-	2,000,000 դրամ/6,000 ԱՄՆ դոլար/6,000 եվրո	2,500,000 դրամ/8,000 ԱՄՆ դոլար/8,000 եվրո	2,500,000 դրամ/8,000 ԱՄՆ դոլար/8,000 եվրո	3,000,000 դրամ/10,000 ԱՄՆ դոլար/10,000 եվրո
19	Կանխիկի տրամադրման օրական գործարքների առավելագույն ընդհանուր գումարի սահմանաչափի ավելացում						
	ա) Մեկանգամյա (նոր սահմանաչափը գործում է մինչև հաջորդ աշխատանքային օրվա 15:00-ն)	3,000 ՀՀ դրամ	-	3,000 ՀՀ դրամ	3,000 ՀՀ դրամ	3,000 ՀՀ դրամ	3,000 ՀՀ դրամ
	բ) Քարտի գործողության ամբողջ ժամանակահատվածի համար	10,000 ՀՀ դրամ	-	10,000 ՀՀ դրամ	10,000 ՀՀ դրամ	10,000 ՀՀ դրամ	10,000 ՀՀ դրամ
20	Կանխիկի տրամադրման օրական գործարքների առավելագույն քանակը	5	-	5	5	5	5
21	Կանխիկի տրամադրում ⁶						
	ա) Ամերիաբանկի բանկոմատներում	2.0%	-	2.0%	2.0%	2.0%	2.0%
	բ) Ամերիաբանկի մասնաճյուղերի դրամարկղերում, այդ թվում POS տերմինալներով	2.2%	-	2.2%	2.2%	2.2%	2.2%
	գ) Այլ բանկոմատներում և կանխիկացման կետերում	2.5% նվազագույնը 2,500 ՀՀ դրամ	-	2.5% նվազագույնը 2,500 ՀՀ դրամ	2.5% նվազագույնը 2,500 ՀՀ դրամ	2.5% նվազագույնը 2,500 ՀՀ դրամ	2.5% նվազագույնը 2,500 ՀՀ դրամ
23	Ամերիաբանկի քարտերին կանխիկ միջոցների մուտքագրում Ամերիաբանկի կանխիկ միջոցների մուտքագրման սարքավորումների միջոցով ⁷	Անվճար	-	Անվճար	Անվճար	Անվճար	Անվճար
23	Ամերիաբանկի քարտերին կանխիկ միջոցների մուտքագրում այլ բանկերի կանխիկ միջոցների մուտքագրման սարքավորումների միջոցով	0.6%	-	0.6%	0.6%	0.6%	0.6%

⁵ Քարտով առանց հավաստագրման գործառնությունների կասեցում ամբողջ աշխարհում:

⁶ Այն դեպքում, երբ հաշվից կանխիկացումից հետո հաճախորդը փակում է Բանկում առկա բոլոր հաշիվները և հաճախորդի հաշիվների մնացորդը փոքր է սակագներով սահմանված կանխիկացման նվազագույն գումարից, կանխիկացումից միջնորդավճար չի գանձվում::

⁷ Digital քարտերի դեպքում բանկոմատների միջոցով կանխիկ մուտքի ծառայությունը հասանելի չէ:

24	Քարտով կատարվող անկանխիկ վճարումներ առևտրի/սպասարկման կետերում՝ ներառյալ ինտերնետ միջավայրում	Անվճար	Անվճար	Անվճար	Անվճար	Անվճար	Անվճար
25	Քարտից/քարտային հաշվից քարտի համարով կատարվող փոխանցումներ (Բնտերնետ բանկինգ/Մոբայլ բանկինգ համակարգի, բանկոմատների, ԱրՔա հավելվածի կամ կայքի միջոցով) ⁸	2.0%	2.0%	2.0%	2.0%	2.0%	2.0%
26	Բանկի մասնաճյուղերում կամ Բնտերնետ-Բանկինգ/Մոբայլ-բանկինգ համակարգով քարտային հաշիվներից կատարվող փոխանցումներ այլ հաշիվներին (ներառյալ արժույթի փոխանակմամբ) ⁹	2% ¹⁰ + « Ամերիաբանկ » ՓԲԸ Սակագներ ֆիզիկական անձ հաճախորդների համար» «4. Փոխանցումներ» գլխով նախատեսված տվյալ տեսակի և համապատասխան արժույթով փոխանցման համար սահմանված համապատասխան միջնորդավճար					
27	Բանկի կայքով Քարտից Ամերիաբանկի հաճախորդների հաշիվներին/քարտերին գումարի փոխանցում ¹¹	2.0%	2.0%	2.0%	2.0%	2.0%	2.0%
28	Ամերիաթրիմ փոխանցումներ Բնտերնետ/Մոբայլ բանկինգ համակարգի միջոցով քարտային հաշվից իրականացնելու դեպքում ¹²	2.0%	2.0%	2.0%	2.0%	2.0%	2.0%
29	Քարտի միջոցով էլեկտրոնային դրամապանակի համալրում	2.0%	2.0%	2.0%	2.0%	2.0%	2.0%

⁸ Շահառուի քարտին գումարը ակտիվանում է անմիջապես, իսկ հաշվին՝ Ամերիաբանկի քարտերի դեպքում՝ հաջորդ աշխատանքային օրը, իսկ այլ բանկերի քարտերի դեպքում՝ համաձայն տվյալ բանկի պայմանների: Սույն կետում նշված փոխանցումներն իրականացվում են միայն ՀՀ դրամով:

⁹ Բանկի մասնաճյուղերում և Բնտերնետ/Մոբայլ-Բանկինգ համակարգի միջոցով ներկայացվող կոմունալ վճարման հանձնարարականները իրականացվում են առանց միջնորդավճարի:

¹⁰ Եթե հաճախորդի համար սահմանված կանխիկի տրամադրման միջնորդավճարն Ամերիաբանկի բանկոմատներում և կանխիկացման կետերում տարբերվում է 2%-ից, ապա գործում է հաճախորդի համար սահմանված կանխիկի տրամադրման միջնորդավճարը:

¹¹ Միննույն հաշվի վրա կարող է կատարվել օրական առավելագույնը 3 գործարք: Մեկ գործարքի առավելագույն գումարը սահմանվում է ըստ հետևյալի.
ՀՀ Դրամ՝ 500,000, ԱՄՆ դոլար՝ 1,000, Եվրո՝ 1,000, Ռուբլի՝ 50,000:

¹² Ամերիաթրիմ մեկ փոխանցման առավելագույն գումարը սահմանվում է 200,000 ՀՀ դրամ, նվազագույն գումարը՝ 1,000 ՀՀ դրամ, և գումարի բաժանարարը պետք է հավասար լինի 1,000-ի: Փոխանցման հայտ/եր/ում լրացված՝ միննույն հեռախոսահամարի միջոցով Ամերիաթրիմ փոխանցումներից կանխիկացումը 24 ժամվա ընթացքում չի կարող գերազանցել 200,000 ՀՀ դրամը:

30	Քաղվածքի տրամադրում	Համաձայն «Ամերիաբանկ» ՓԲԸ Սակագներ ֆիզիկական անձ հաճախորդների համար» փաստաթղթի 2-րդ գլխի "Քաղվածքների, տեղեկատվական նյութերի և կրկնօրինակների տրամադրման միջնորդավճար" բաժնի պայմանների					
31	SMS հաղորդագրությունների ուղարկում (հաղորդագրություն ուղարկվում է 10,000 ՀՀ դրամ (համարժեք արտարժույթ) և ավելի գումարով գործարքների դեպքում)	Անվճար	Անվճար	Անվճար	Անվճար	Անվճար	Անվճար
32	SMS հաղորդագրությունների ուղարկում ցանկացած գումարով գործարքի դեպքում	10 ՀՀ դրամ յուրաքանչյուր գործարքի համար ներառյալ ԱԱՀ	10 ՀՀ դրամ յուրաքանչյուր գործարքի համար ներառյալ ԱԱՀ	10 ՀՀ դրամ յուրաքանչյուր գործարքի համար ներառյալ ԱԱՀ	10 ՀՀ դրամ յուրաքանչյուր գործարքի համար ներառյալ ԱԱՀ	10 ՀՀ դրամ յուրաքանչյուր գործարքի համար ներառյալ ԱԱՀ	10 ՀՀ դրամ յուրաքանչյուր գործարքի համար ներառյալ ԱԱՀ
33	Քարտով կատարված գործարքների հետգանձման հայտ (գանձվում է միայն այն դեպքում, երբ բողոքարկման գործընթացի արդյունքում պարզվել է, որ գործարքը կատարվել է հաճախորդի կողմից կամ հաճախորդի կողմից քարտի օգտագործման կանոնների խախտման հետևանքով)	10,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր գործարքի համար ներառյալ ԱԱՀ	10,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր գործարքի համար ներառյալ ԱԱՀ	10,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր գործարքի համար ներառյալ ԱԱՀ	10,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր գործարքի համար ներառյալ ԱԱՀ	10,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր գործարքի համար ներառյալ ԱԱՀ	10,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր գործարքի համար ներառյալ ԱԱՀ
34	Ամերիաբանկի քարտերից բացի այլ քարտերով կատարված գործարքների հետգանձման հայտ	10,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր գործարքի համար ներառյալ ԱԱՀ	10,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր գործարքի համար ներառյալ ԱԱՀ	10,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր գործարքի համար ներառյալ ԱԱՀ	10,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր գործարքի համար ներառյալ ԱԱՀ	10,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր գործարքի համար ներառյալ ԱԱՀ	10,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր գործարքի համար ներառյալ ԱԱՀ
35	Քարտի առաքում						
	ա) ՀՀ և ԱՀ տարածքում	Անվճար	-	Անվճար	Անվճար	Անվճար	Անվճար
	բ) Արտերկիր	Ըստ առաքման փաստացի ծախսի	-	Ըստ առաքման փաստացի ծախսի	Ըստ առաքման փաստացի ծախսի	Ըստ առաքման փաստացի ծախսի	Ըստ առաքման փաստացի ծախսի
36	Քարտի տրամադրում բանկի մասնաճյուղերում (գանձվում է միայն նոր թողարկվող քարտերի դեպքում) ¹³	1,000 ՀՀ դրամ	-	1,000 ՀՀ դրամ	1,000 ՀՀ դրամ	1,000 ՀՀ դրամ	1,000 ՀՀ դրամ

¹³ Միջնորդավճարը գանձվում է քարտի պատվիրման պահին և չի կիրառվում երրորդ անձի անունով բացված հավելյալ քարտերի տրամադրման դեպքում, եթե երրորդ անձը հայտի ներկայացման պահին չի գտնվում Բանկում, աշխատավարձային նախագծերի շրջանակներում գործատուի կողմից պատվիրված առաջին քարտի դեպքում, ինչպես նաև, երբ քարտը պատվիրվել է մեկ բանկային օրվա ընթացքում տրամադրման պայմանով, որի պարագայում կիրառվում է միայն տվյալ ծառայության սակագինը:

37	Քարտային գործարքների ապահովագրություն՝ համաձայն «Ամերիաբանկ» ՓԲԸ քարտերի ապահովագրության պայմանների և վերջիններիս գործողության ընթացքում ¹⁴	3,000 ՀՀ դրամ տարեկան	3,000 ՀՀ դրամ տարեկան	5,000 ՀՀ դրամ տարեկան	5,000 ՀՀ դրամ տարեկան	5,000 ՀՀ դրամ տարեկան	10,000 ՀՀ դրամ տարեկան
----	--	-----------------------	-----------------------	-----------------------	-----------------------	-----------------------	------------------------

Լրացուցիչ սակագներ

1. Հաշվի նվազագույն մնացորդ	Չի կիրառվում
2. Կանխիկ միջոցների մուտքագրում հաճախորդի հաշվին	
2.1 ՀՀ դրամ ¹⁵	
2.1.1. Մինչև 400,000 ՀՀ դրամը ներառյալ ¹⁶	500 ՀՀ դրամ
2.1.2. 400,000 ՀՀ դրամից ավելի	Անվճար
2.2 ԱՄՆ դոլար, եվրո ¹⁷	Անվճար
3. Հաշվի հեռավար սպասարկման համակարգեր ¹⁸	
3.1 Ինտերնետ/Մոբայլ-Բանկինգ համակարգի ակտիվացում. Մեկանգամյա ծածկագիր գեներացնող սարքի, Ամերիա Թոքեն ծրագրային ապահովման կողի փոխարինում նորով	Միանվագ 10,000 ՀՀ դրամ
3.2 MyAmeria համակարգի տրամադրում	Միանվագ 1,000 ՀՀ դրամ

¹⁴ Միջնորդավճարը չի գանձվում քարտին կից վարկային գծի ամկայության դեպքում:

¹⁵ Վճարահաշվարկային կազմակերպությունների հաշվին կանխիկի մուտքագրման համար, անկախ գումարի մեծությունից, գանձվում է մուտքագրվող գումարի 0.3%, սակայն ոչ պակաս քան 5,000 ՀՀ դրամ:

¹⁶ Բացառությամբ հետևյալ դեպքերի, որոնց պարագայում հաշվին կանխիկ միջոցների մուտքագրման դեպքում միջնորդավճար չի գանձվում.

- Միջնորդավճարի գանձման նպատակով կանխիկի մուտքագրում
- Մասնագետ-գանձապահի միջոցով կատարվող այլ գործարքների (ներառյալ ՀՀ Պետական և/կամ տեղական ինքնակառավարման մարմիններին, այդ թվում՝ նոտարական գրասենյակներին, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի սպասարկման գրասենյակներին և պետական այլ մարմինների հաշիվներին կատարվող փոխանցումների) հետ միաժամանակ իրականացվող կանխիկի մուտքագրում:

¹⁷ 500 եվրո արժողությամբ թղթադրամների հաշվին մուտքագրման համար կիրառվում է 2% միջնորդավճար: 500 եվրո արժողությամբ թղթադրամներ ընդունվում են միայն Գլխամասային գրասենյակում:

¹⁸ Բանկը յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար սահմանում է արտարժույթի առք և վաճառքի փոխարժեքներ, որոնք գործում են Բանկի աշխատանքային ժամերին: Հեռակառավարման համակարգերով հաճախորդների սպասարկման ընթացքում աշխատանքային ժամերից դուրս (մինչև ժամը 09:30 և ժամը 17:00-ից հետո), նաև ոչ աշխատանքային օրերին (այդ թվում նաև շաբաթ օրերին) ստացված արտարժույթի փոխանակման հայտերը Բանկի կողմից կարող են մերժվել:

3.3 Ինտերնետ/Մոբայլ-Բանկինգ համակարգի, MyAmeria համակարգի գաղտնաբառի վերականգնում Բանկի մասնաճյուղերում	1,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ
3.4 Ինտերնետ/Մոբայլ-Բանկինգ համակարգի սպասարկում	3,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի համար
3.5 Հեռախոս – բանկ ծառայության տրամադրում	Միանվագ 5,000 ՀՀ դրամ
3 Հաշվի փակում	Անվճար

Քարտի և PIN կոդերի թողարկում, վերաթողարկում, տրամադրում և ակտիվացում

- Քարտով, ինչպես նաև առկայության դեպքում՝ հավելյալ քարտ(եր)ով կատարվող գործարքների համար միջոցների շրջանառությունը ապահովելու նպատակով Բանկը վարում է քարտային հաշիվ: Քարտային հաշիվը բացվում է Հիմնական քարտապանի անունով՝ հիմք ընդունելով հաճախորդի և Բանկի միջև կնքված հայտ-պայմանագիրը:
- Քարտային հաշիվը բացվում է ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով կամ եվրոյով:
- Քարտապանը (բացառությամբ Նվեր և բիզնես քարտերի քարտապանների) հանդիսանում է Այո (AYO) ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) մասնակից, որի շրջանակներում իրականացվում է Ծրագրի գործընկեր կազմակերպությունների առևտրային և սպասարկման կետերում կատարված անկանխիկ վճարումների դիմաց հետվճար (վճարված գումարի մասնակի վերադարձ): Ծրագիրն իրականացվում է «Բեստ Քարդ» ՍՊԸ կողմից՝ համաձայն [«AYO ծրագրին մասնակցության պայմանների»](#), որը հասանելի է նաև «Բեստ Քարդ» ՍՊԸ կայքէջում (www.ayocard.am):
- Նոր պատվիրված և վերաթողարկված քարտի և PIN կոդի տրամադրման գործընթացը (եթե վերջինս ենթակա չէ ձևավորման OTP-ի կիրառմամբ) կազմակերպվում է քարտի պատվիրման/վերաթողարկման հայտը Քարտապանի կողմից Բանկ ներկայացնելուց հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում՝ Բանկի Գլխամասային գրասենյակի կամ Երևանյան որևէ մասնաճյուղի տարածքում տրամադրելու դեպքում, 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում՝ Երևան քաղաքից դուրս գտնվող տարածքներում տրամադրելու դեպքում: Քարտը և PIN կոդը առաքման եղանակով տրամադրելու դեպքում առաքման ժամկետը պայմանավորված է առաքման ծառայություններ մատուցող ընկերությունների պայմաններով:
- OTP-ն Քարտապանի կողմից Բանկին գրավոր ձևով տրամադրված բջջային հեռախոսահամարին կարճ հաղորդագրությամբ ուղարկվող մեկանգամյա գաղտնաբառ է, որը կիրառվում է Քարտապանի կողմից քարտի PIN կոդը ստեղծելու և քարտն ակտիվացնելու նպատակով: PIN կոդը կարող է սահմանվել քարտը սպասարկող վճարահաշվարկային համակարգի մասնակից հանդիսացող բանկի բանկոմատի միջոցով, եթե տվյալ բանկոմատը հագեցած է համապատասխան տեխնիկածրագրային լուծումներով:
- Քարտը և PIN կոդը Քարտապանին տրամադրվում են Բանկի և Քարտապանի միջև նախապես համաձայնեցված եղանակով: Վերաթողարկված Քարտերի դեպքում Քարտը և PIN կոդը Քարտապանին տրամադրվում են Բանկի և Քարտապանի միջև նախկինում համաձայնեցված եղանակով, եթե Քարտապանը Բանկին չի ներկայացրել Բանկի կողմից սահմանված ձևանմուշով համապատասխան այլ հանձնարարական
- Քարտը և PIN կոդը Քարտապանին տրամադրվում են առանձին՝ փակ ծրարներով, բացառությամբ OTP կիրառմամբ PIN կոդի ձևավորման դեպքի, որի պարագայում PIN կոդը, քարտը ստանալուց հետո, սահմանվում է Քարտապանի կողմից: Քարտի պատվիրման կամ քարտի վերաթողարկման օրվանից 60 (վաթսուն) օրվա ընթացքում քարտը Քարտապանի կողմից չստանալու դեպքում Բանկն իրավասու է փակել և ոչնչացնել քարտը

8. PIN կողը Քարտապանի կողմից սահմանվելու դեպքում OTP-ն կարճ հաղորդագրությամբ ուղարկվում է Քարտապանի՝ Բանկին նախօրոք գրավոր տրամադրված բջջային հեռախոսահամարին Քարտապանի կողմից Բանկումատի միջոցով քարտն ակտիվացնելու համապատասխան հրահանգները կատարելու գործընթացում: Ստացված OTP-ն Քարտապանի կողմից պետք է մուտքագրվի Բանկումատի համապատասխան դաշտում, որից հետո Քարտապանը կարող է ինքնուրույն սահմանել PIN կողը: Քարտապանի կողմից որպես քարտի PIN կողի ստացման նախընտրելի եղանակ OTP-ի կիրառման տարբերակը ընտրվելու պարագայում տվյալ քարտի PIN կողի ստացման նախընտրելի եղանակը չի կարող փոփոխվել:
9. Քարտապանը կարող է Քարտի գործողության ընթացքում իր հայեցողությամբ փոխել PIN կողը՝ համապատասխան հնարավորությամբ Բանկումատի միջոցով: PIN կողի փոփոխման համար անհրաժեշտ է մուտքագրել գործող և նոր PIN կողերը: PIN կողը փոխելիս անհրաժեշտ է հետևել Բանկի կողմից սահմանված անվտանգության կանոններին, որոնք հրապարակվում են Բանկի կայքում կամ ծանուցվում են Քարտապանին: PIN կողը մոռանալու դեպքում Քարտապանը կարող է Բանկի կողմից սահմանված ձևանմուշով համապատասխան հանձնարարական ներկայացնելու միջոցով OTP-ի կիրառմամբ ինքնուրույն սահմանել նոր PIN կող կամ վերաթողարկել քարտը՝ համաձայն Բանկի սակագների:
10. Քարտի գործողության ժամկետի ավարտից հետո քարտը Բանկի կողմից վերաթողարկվում է Բանկում այդ պահին գործող սակագների և պայմանների համաձայն, բացառությամբ եթե քարտի գործողության ժամկետի ավարտից առնվազն 10 (տասը) օր առաջ Քարտապանը գրավոր տեղեկացրել է Բանկին քարտից հրաժարվելու մասին, քարտը բլոկավորված է, Քարտապանը ունի քարտի հետ կապված Բանկի նկատմամբ չմարված պարտավորություններ, կամ Բանկը որոշում է կայացրել չվերաթողարկել քարտը:
11. Քարտն ակտիվացվում է հետևյալ ժամկետներում և կարգով՝
 - Բանկի տարածքում տրամադրվելու դեպքում՝ քարտը և PIN կողը Քարտապանի կողմից ստանալուց հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում,
 - Առաքման եղանակով տրամադրվելու դեպքում՝ քարտը ակտիվացնելու համար Քարտապանի և Բանկի միջև կապ հաստատվելուց հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում՝ Բանկի կողմից Քարտապանին պատշաճ նույնականացման պարագայում:
 - OTP-ի կիրառմամբ PIN կողի ձևավորման եղանակի դեպքում՝ Քարտապանի կողմից PIN կողը Բանկումատի միջոցով սահմանվելու գործընթացի բարեհաջող ավարտի պահին:

Քարտով կատարվող գործարքներ

1. Քարտով իրականացվում են հետևյալ տեսակի գործարքները, եթե առանձին տեսակի քարտերի համար Բանկի կողմից սահմանված պայմաններով, սակագներով և (կամ) պայմանագրերով սահմանափակումներ նախատեսված չեն՝
 - կանխիկի մուտքագրում՝ քարտով/քարտին կանխիկ մուտքի հնարավորություն ունեցող սարքավորման միջոցով, ինչպես նաև Բանկի դրամարկղում,
 - կանխիկի ելքագրում՝ քարտով/քարտից կանխիկի ելքի հնարավորություն ունեցող Բանկումատի կամ սարքավորման, POS տերմինալի միջոցով, ինչպես նաև Բանկի դրամարկղում,
 - փոխանցում՝ Բանկումատի միջոցով, բանկերում, ինչպես նաև բանկերի կայքերի և հեռակառավարվող համակարգերի և ArCa առցանց վճարային համակարգի միջոցով,
 - անկանխիկ եղանակով վճարում ապրանքների և ծառայությունների դիմաց՝ առևտրի/սպասարկման կետերում, ներառյալ՝ ինտերնետ միջավայրում:
2. ՀՀ բանկերի Բանկումատների միջոցով կանխիկի ելքագրման մեկ գործարքի գումարը չի կարող գերազանցել 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը:

3. Կանխիկի մուտքագրման սարքավորման հնարավորություններն ու սահմանափակումները՝ կապված մուտքագրվող գումարի արժույթի, թղթադրամի արժողության/տեսակի հետ և այլն, սահմանվում են տվյալ սարքավորման սպասարկող կազմակերպության և (կամ) վճարային համակարգի կողմից, և նման տեղեկատվությունը որպես կանոն ներկայացված է այդ սարքավորման վրա:
4. Քարտով դրամական միջոցների, այդ թվում՝ վարկային միջոցների շարժը (մուտքագրումներ, ելքագրումներ), կանխիկ և անկանխիկ եղանակով օգտագործումը իրականացվում է համաձայն [Վճարային քարտերի սպասարկման պայմանների](#) և ArCa, VISA, MasterCard վճարահաշվարկային համակարգերի կողմից սահմանված պայմանների և կանոնների:
5. VISA և MasterCard վճարային համակարգերի կողմից համապատասխան քարտատեսակների համար սահմանվող արտոնությունները, հնարավորությունները, հավելյալ ծառայությունները, այդ թվում դրանց գծով գանձվող վճարները, սահմանափակումները կարգավորվում են Պայմաններով և վճարային համակարգերի կողմից սահմանված պայմաններով և կանոններով, որոնք հասանելի են հետևյալ հղումներով՝ https://cis.visa.com/ru_TJ/visa-in-armenia.html, <https://www.mastercard.am/en-am.html> .

Հավելյալ քարտ

1. Քարտապանը (Հիմնական քարտապան) կարող է իր քարտին (հիմնական քարտ) կից Բանկից ստանալ հավելյալ քարտ(եր) ինչպես իր համար, այնպես էլ երրորդ անձի համար:
2. Հավելյալ քարտը կարող է տարբեր լինել հիմնական քարտի տեսակից, սակայն պետք է քարտի դասով լինի հիմնական քարտին հավասար կամ ավելի ցածր դասի:
3. Վարկային քարտին կից տրամադրվում է բացառապես վարկային հավելյալ քարտ:
4. Հավելյալ քարտի համար առանձին գաղտնաբառ չի կիրառվում: Հավելյալ քարտով գաղտնաբառի կիրառմամբ նախատեսված գործողություններն իրականացվում են Հիմնական քարտապանի կողմից՝ հիմնական քարտի գաղտնաբառով:
5. Հավելյալ քարտը առաքման եղանակով տրամադրելու դեպքում քարտի ակտիվացման նպատակով պետք է կապ հաստատվի Բանկի և Հիմնական քարտապանի միջև քարտի և PIN կոդի ստացումը հաստատելու համար:
6. Հավելյալ քարտով կատարվող գործարքները հաշվառվում և արտացոլվում են հիմնական քարտի քարտային հաշվում:
7. Հիմնական քարտով և հավելյալ քարտ(եր)ով կատարված գործարքների հանրագումարը չպետք է գերազանցի հիմնական քարտի համար սահմանված վճարային սահմանաչափը:
8. Հիմնական քարտապանը յուրաքանչյուր հավելյալ քարտի համար կարող է սահմանել առանձին ամսական վճարային սահմանաչափ:
9. Հիմնական և հավելյալ քարտերով իրականացված բոլոր գործարքների արդյունքում Բանկի նկատմամբ ձևավորված պարտավորությունները հանդիսանում են Հիմնական քարտապանի պարտավորությունները:
10. Վերաթողարկված հավելյալ քարտը Բանկի կողմից կարող է տրամադրվել Հավելյալ քարտապանին՝ առանց Հիմնական քարտապանին նախապես տեղեկացնելու:
11. Հավելյալ քարտապան(ներ)ը պարտավորվում է(են) անհապաղ տեղեկացնել Բանկին Հիմնական քարտապանի մահվան, անգործունակության, անվճարունակության կամ սնանկության դեպքերում և չօգտագործել քարտը նման տեղեկատվություն ունենալու դեպքում:

Քարտի օգտագործման և անվտանգության կանոններ

1. Քարտապանն իրավունք չունի փոխանցել քարտը, հայտնել OTP-ն, PIN կոդը, գաղտնաբառը այլ անձանց, գրել PIN կոդը կամ OTP-ն քարտի վրա, ինչպես նաև քարտը և PIN կոդը պահել միասին: Քարտապանը պարտավոր է ձեռնարկել միջոցներ, որպեսզի քարտը, OTP-ն, PIN կոդը, գաղտնաբառը, քարտի վրա նշված տեղեկատվությունը տեսանելի կամ այլ կերպ հասանելի չլինեն այլ անձանց:
2. Արգելվում է ինտերնետ միջավայրում (վիրտուալ առևտրի կետերում) մուտքագրել (հայտնել) PIN կոդը: PIN կոդը հայտնելու դեպքում անհրաժեշտ է անմիջապես դադարեցնել գործարքը, տեղեկացնել Բանկին և բլոկավորել քարտը:
3. Քարտը օգտագործելիս PIN կոդը անհրաժեշտ է հավաքել այնպես, որ տեսանելի չլինի այլ անձանց համար և չտեսագրվի որևէ տեսաձայնագրող սարքի միջոցով:
4. Քարտապանը պետք է առավել ուշադիր լինի այն գործարքների մասով, որոնք իրականացվում են ժամանցի և նմանատիպ այլ վայրերում: Խորհուրդ է տրվում քարտը չվստահել այլ անձանց և թույլ չտալ քարտի օգտագործումը Քարտապանի տեսադաշտից դուրս:
5. Չի կարելի օգտվել այն բանկոմատներից, կանխիկացման և առևտրի/սպասարման կետերից և սարքավորումներից, որոնք հաճախորդի կարծիքով վստահելի չեն կամ կասկած են առաջացնում, ինչպես նաև եթե դրանց քարտ ընթերցող սարքին, ստեղնաշարին կամ կանխիկի տրամադրման պատուհանին միացված են լրացուցիչ սարքավորումներ, հաղորդալարեր, կաշուն ժապավեններ և այլ կասկածելի իրեր:
6. Ինտերնետ միջավայրում քարտով գործարք կատարելիս Քարտապանը պետք է նախապատվություն տա ապահով վճարում նախատեսող կայքերին (secure-payment website): Առցանց խաղատները, բուքմեյքերական գրասենյակները համարվում են առավել ռիսկային:
7. Քարտը ստանալուն պես Քարտապանը պարտավոր է անմիջապես ստորագրել քարտի հակառակ կողմի վրա ստորագրության համար նախատեսված հատուկ դաշտում: Քարտի հակառակ կողմում ստորագրության բացակայությունը կամ դրա անհամապատասխանությունը օրինական հիմք է քարտի սպասարկումը մերժելու և քարտն առգրավելու համար:
8. Քարտապանի կողմից քարտի նոր PIN կոդը սահմանելիս նախընտրելի է սահմանել հնարավորինս բարդ գաղտնաբառ: Խորհուրդ է տրվում չօգտագործել իրար հաջորդող կամ կրկնվող թվեր:
9. Քարտի, OTP-ի, PIN կոդի, և գաղտնաբառի օգտագործման հետ կապված ամբողջ ռիսկը կրում է Քարտապանը:
10. Քարտով գործարքների իրականացման ժամանակ Քարտապանը պետք է մուտքագրի PIN կոդը, եթե գործարքի կատարման համար օգտագործվող սարքավորման միջոցով տվյալ տեսակի քարտով գործարքի իրականացման համար պահանջվում է PIN կոդի մուտքագրում: Ինտերնետ միջավայրում (վիրտուալ առևտրի կետերում) քարտով գործարքների իրականացման ժամանակ PIN կոդի մուտքագրում չի պահանջվում: Անհպում ստիկերների դեպքում ՀՀ տարածքում մինչև 20,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթով օրական առավելագույնը 5 (հինգ) գործարք կատարելու դեպքում PIN կոդի մուտքագրում չի պահանջվում: ՀՀ տարածքից դուրս անհպում գործարքների դեպքում PIN կոդի մուտքագրման պահանջը կարգավորում է համապատասխան վճարային համակարգի (VISA կամ MasterCard) տվյալ երկրի համար գործող պայմաններով և կանոննարով:
11. Ինտերնետ միջավայրում քարտի օգտագործման անվտանգությունը բարձրացնելու նպատակով «VBV/Secure code» նշում ունեցող կայքերում գործարքներ կատարելու համար Քարտապանը պետք է մուտքագրի Բանկի կողմից տրամադրվող մեկանգամյա գաղտնաբառը, որը Քարտապանը յուրաքանչյուր անգամ գործարք կատարելիս ստանում է Բանկին նախապես տրամադրված բջջային հեռախոսահամարին ուղարկվող SMS հաղորդագրության միջոցով: Տեխնիկական կամ Բանկի գործունեությամբ չպայմանավորված որևէ պատճառով SMS հաղորդագրություն չստանալու և դրա արդյունքում գործարքը խափանվելու դեպքում Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում:
12. Քարտի անվտանգությունն ապահովելու նպատակով Քարտապանը իր ցանկությամբ քարտի գործողության ընթացքում ցանկացած պահի կարող է սահմանել քարտով գործարքների սահմանափակումներ՝ ըստ գործարքի տեսակի և (կամ) ըստ գործարքի կատարման աշխարհագրության: Սահմանափակումը կիրառվում է միայն հավաստագրվող գործարքների համար և գործում է Քարտապանի սահմանած ժամանակահատվածում:
13. Ելնելով անվտանգության նկատառումներից՝ Բանկն իրավասու է արգելել կամ սահմանափակել առավել ռիսկային երկրներում քարտի կիրառմամբ գործարքների կատարումը:
14. Քարտի անվտանգությունն ապահովելու նպատակով Քարտապանի ցանկությամբ՝ Բանկը Քարտապանին ուղարկում է քարտով կատարված գործարքների մասին SMS հաղորդագրություն Բանկում գործող սակագների համաձայն: Քարտով իրականացված գործարքների մասին SMS հաղորդագրության ծառայությունից

- օգտվելը զգալիորեն բարձրացնում է Քարտի ապօրինի օգտագործման կանխարգելման հնարավորությունները, քանի որ նման գործարքների մասին հաղորդագրություն ստանալով՝ Քարտապանը կարող է անհապաղ տեղեկացնել Բանկին և կանխել քարտի հետագա ապօրինի օգտագործումը:
15. Քարտով կատարված գործարքի վերաբերյալ SMS հաղորդագրություն ստանալիս Քարտապանը պետք է ստուգի գործարքի գումարը և կարգավիճակը (կատարված, մերժված և այլն): Գործարքի հետ համաձայն չլինելու դեպքում Քարտապանը պարտավոր է անհապաղ տեղեկացնել այդ մասին Բանկին՝ անհրաժեշտության դեպքում բլոկավորելով քարտը:
16. Քարտապանը պարտավոր է SMS հաղորդագրության ծառայության, ինչպես նաև բջջային հեռախոսահամարի օգտագործմամբ Բանկի կողմից հասանելի դարձվող այլ ծառայությունների (այդ թվում՝ [USSD ծառայություն](#)) համար Բանկում գրանցված Քարտապանի բջջային հեռախոսահամարի փոփոխության դեպքում անմիջապես տեղեկացնել Բանկին: Քարտապանի կողմից բջջային հեռախոսահամարի փոփոխության մասին Բանկին չտեղեկացնելու հետևանքով երրորդ անձանց տեղեկատվության հասանելի դառնալը չի համարվում բանկային գաղտնիք կազմող տեղեկատվության հրապարակում: Քարտապանի հեռախոսը երրորդ անձանց հասանելի դառնալու պարագայում դրանում պահվող տվյալները կամ հեռախոսի միջոցով ձեռքբերվող տեղեկատվությունը բացահայտվելու դեպքում Բանկը պատասխանատվություն չի կրում:
17. Անփոփագրում սահմանված կանոնների և պահանջների խախտումով՝ քարտով կատարված գործարքների, ինչպես նաև քարտի, OTP-ի, PIN կոդի, գաղտնաբառի, քարտի վրա նշված տեղեկատվության (քարտի համար, CVV/CVC կոդ, վավերության ժամկետ) օգտագործման, երրորդ անձանց տրամադրման կամ հայտնի դառնալու հետևանքով Քարտապանի կրած վնասների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում:
18. Բանկը պարտավոր է հաճախորդի հետ պայմանագիր կնքելիս վերջինիս տրամադրել [Վճարային քարտերի սպասարկման պայմանները և օգտագործման կանոնները](#), որտեղ ներկայացված են քարտի օգտագործման և անվտանգության ամբողջական կանոնները:

Քարտի կորուստ, գողություն, զեղծարարություն (կամ կասկած)

- Քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) դեպքում քարտի բլոկավորման համար Քարտապանը պարտավոր է անմիջապես այդ մասին տեղեկացնել Բանկին կամ ArCa պրոցեսինգային կենտրոնին՝ կապ հաստատելով հետևյալ ցանկացած եղանակով՝
 - Քարտի վրա նշված հեռախոսահամարով,
 - Բանկի շուրջօրյա (+374 10) 56 11 11 հեռախոսահամարով,
 - ArCa պրոցեսինգային կենտրոնի (+374 10) 59 22 22 հեռախոսահամարով,
 - Բանկի cardsupport@ameriabank.am էլեկտրոնային փոստի հասցեով,
 - Բանկի ինտերնետ-բանկ համակարգով՝ Բանկի աշխատանքային ժամերին,
 - այցելություն Բանկի գլխամասային գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ՝ Բանկի գործառնական ժամերին:
- Քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) դեպքում խորհուրդ է տրվում վերաթողարկել քարտը: Եթե Քարտապանը ցանկանում է շարունակել օգտագործել նման քարտը, ապա պետք է Բանկ ներկայացնի քարտի ապաբլոկավորման դիմում: Այս դեպքում քարտի օգտագործման հետ կապված հնարավոր կորուստների և վնասների համար պատասխանատվությունը կրում է Քարտապանը:
- Քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) մասին ստացված տեղեկատվության հիման վրա Բանկը բլոկավորում է քարտը:
- Մինչև քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) մասին Բանկին տեղեկացնելը քարտով կատարված գործարքների համար պատասխանատվությունը կրում է Քարտապանը:
- Քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) մասին Բանկին տեղեկացնելուց հետո քարտով իրականացված՝ հավաստագրում չպահանջող գործարքների, այդ թվում՝ ինտերնետ միջավայրում կատարված գործարքների համար պատասխանատվությունը կրում է Քարտապանը: Առանց հավաստագրման կատարված գործարքների բողոքարկումը հնարավոր դարձնելու համար Քարտապանի համապատասխան դիմումի հիման վրա Բանկը տվյալ վճարահաշվարկային համակարգի կանոններով սահմանված ժամկետում քարտը ներառում է առաջիկա Stop-ցուցակում՝ համաձայն Բանկի սակագների:

6. Քարտապանը պարտավոր է հատուցել քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) մասին Բանկին չտեղեկացնելու կամ ոչ պատշաճ տեղեկացնելու, ինչպես նաև մինչև Բանկին տեղեկացնելը երրորդ անձանց կողմից քարտի օգտագործման հետևանքով Բանկի կրած ծախսերը, կորուստները և վնասները:
7. Քարտի ապօրինի օգտագործման կամ ապօրինի օգտագործման վտանգի մասին տեղեկություններ, կասկած ունենալու դեպքում Քարտապանը պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել Բանկին և բլոկավորել քարտը:

Քարտի բլոկավորում, ապաբլոկավորում

1. Գործարք կատարելիս PIN կոդը հաջորդաբար 3 (երեք) անգամ սխալ հավաքելու դեպքում քարտը կարող է բլոկավորվել և/կամ առգրավվել: Քարտը կարող է առգրավվել նաև բանկոմատից դուրս գալուց հետո 20 (քսան) վայրկյանի ընթացքում քարտը չվերցնելու դեպքում, ինչպես նաև բանկոմատի տեխնիկական խնդիրների և քարտը վնասված լինելու պատճառով:
2. Բանկն իրավունք ունի իր հայեցողությամբ կասեցնել քարտով գործարքների իրականացումը (քարտի բլոկավորում) ինչպես նաև մինչև 120 օր ժամկետով կասեցնել քարտային հաշվի և/կամ դրան մուտքագրված գումարի՝ հաճախորդի կողմից տնօրինման հնարավորությունը, ինչպես նաև մերժել փոխանցված գումարի մուտքագրումը քարտային հաշվին և/կամ առանց հաճախորդի լրացուցիչ հանձնարարության՝ քարտային հաշվից ելքագրել և հետ փոխանցել այդ գումարը փոխանցող կողմին հետևյալ դեպքերում՝
 - Քարտին կամ քարտային հաշվին փոխանցված կամ մուտքագրված գումարի հետ կապված Բանկն ունի տեղեկատվություն կամ կասկածներ՝ զեղծարար գործարք կամ գործարքների շղթայի մաս լինելու վերաբերյալ, այդ թվում միջազգային վճարային համակարգերից ստացված զեղծարարության հաշվետվություններում խնդրահարույց գործարքը նույնականացնող տվյալների առկայության դեպքում,
 - Բանկը գումարը փոխանցող բանկից ստանում է տեղեկատվություն և գրավոր պահանջ՝ փոխանցման գործարքը որպես զեղծարար որակելու և Հաճախորդին փոխանցված գումարը հետ վերադարձնելու մասին,
 - Փոխանցումը կապված է կրիպտոարժույթով գործարքի հետ, և/կամ գործարքի կողմ է կրիպտոարժույթի հետ կապված գործունեություն իրականացնող անձ:
 - Եթե Քարտապանն ունի Բանկի նկատմամբ չմարված պարտավորություններ,
 - Բանկի [հիմնական պայմաններով](#) սահմանված այլ դեպքերում:
3. Եթե բանկոմատի միջոցով քարտով գործարք կատարելիս քարտը բանկոմատում առգրավվել է, և քարտի առգրավման պատճառի մասին որևէ հաղորդագրություն չի արտացոլվում էկրանին կամ անդորրագրի վրա, Քարտապանը պետք է անմիջապես զանգահարի Բանկ և համոզվի, որ քարտը բլոկավորվել է: Եթե քարտը չի բլոկավորվել, անհրաժեշտ է անհապաղ բլոկավորել այն:
4. Բլոկավորված քարտը Բանկի կողմից ապաբլոկավորվում է Քարտապանի գրավոր հանձնարարականի հիման վրա այն ստանալուց հետո նույն աշխատանքային օրվա ընթացքում, եթե այլ բան նախատեսված չէ [Վճարային քարտերի սպասարկման պայմաններում](#) և [Բանկի հիմնական պայմաններում](#): Բանկի նախաձեռնությամբ բլոկավորված քարտը Բանկի կողմից ապաբլոկավորվում է, երբ վերանում է քարտը բլոկավորելու հիմքը, այն վերանալուց հետո նույն աշխատանքային օրվա ընթացքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն Պայմաններում և Բանկի հիմնական պայմաններում:

Քարտով կատարված գործարքների բողոքարկում

1. Քարտով իրականացված գործարքների վերաբերյալ առարկություններ կամ անհամաձայնություն ունենալու դեպքում Քարտապանը կարող է Բանկի կողմից սահմանված ձևով Բանկ ներկայացնել գործարքի բողոքարկման հայտ ոչ ուշ, քան քաղվածքի ստացման ամսաթվից 30 (երեսուն) օրվա ընթացքում: Հայտի հետ անհրաժեշտ է ներկայացնել բողոքարկվող գործարքի հետ կապված փաստաթղթերը և Բանկի պահանջով՝ այլ տեղեկություններ կամ փաստաթղթեր:
2. Առևտրի/սպասարկման կետում կատարված գործարքի չեղարկումից հետո Քարտապանը կարող է Բանկ ներկայացնել բողոքարկման հայտ, եթե չեղարկված գործարքի գումարը առևտրի/սպասարկման կետի կողմից չի վերադարձվել տվյալ առևտրի/սպասարկման կետի կողմից սահմանված ժամկետում կամ հետևյալ ժամկետում՝
 - ՀՀ տարածքում կատարված գործարքների համար՝ չեղարկման օրվանից 10 օր,
 - ՀՀ տարածքից դուրս կատարված գործարքների համար՝ 30 օր:
3. Բանկը պատասխանատվություն չի կրում Քարտապանի կողմից քարտով կատարված գործարքների համար, սակայն պատրաստ է հնարավորության սահմաններում օժանդակել Քարտապանի կողմից ներկայացված խնդրի կարգավորմանը: Խնդիրը չկարգավորվելու դեպքում Քարտապանը չի ազատվում Բանկի նկատմամբ ունեցած իր պարտավորություններից:
4. Առևտրի/սպասարկման կետում իրականացված գործարքի բողոքարկումը չի հանդիսանում Բանկի նկատմամբ բողոքի կամ բողոք-պահանջի ներկայացում, և Բանկի դերակատարումը սահմանափակվում է համապատասխան խնդրի կարգավորմանը միջնորդությամբ և օժանդակությամբ:
5. Եթե բողոքարկման գործընթացի արդյունքում պարզվում է, որ գործարքը կատարվել է Քարտապանի կողմից կամ Քարտապանի կողմից քարտի օգտագործման կանոնների խախտման հետևանքով, Քարտապանից գանձվում է Բանկի սակագներով սահմանված վճար:
6. Բողոքարկման հայտի պատասխանը Բանկը Քարտապանին տրամադրում է հետևյալ ժամկետներում՝
 - ArCa վճարահաշվարկային համակարգում կատարված գործարքների դեպքում՝ հայտի ստացման օրվանից 40 (քառասուն) օրվա ընթացքում,
 - միջազգային վճարահաշվարկային համակարգերում կատարված գործարքների դեպքում՝ հայտի ստացման օրվանից 60 (վաթսուն) օրվա ընթացքում,
 - Բանկի բանկոմատներով կատարված կանխիկ գումարի մուտքագրման կամ ելքագրման գործարքների բողոքարկման դեպքում (եթե բանկոմատը չի տրամադրել կանխիկ գումարը, սակայն այն նվազեցվել է քարտային հաշվից, կամ Քարտապանը մուտքագրել է կանխիկ գումար, սակայն քարտային մնացորդը չի ավելացել) հայտի ստացման օրվանից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:
7. Անհպում վճարման (contactless) եղանակով կատարված գործարքների բողոքարկման դեպքում Բանկը հատուցում է քարտապանի հաշվից դեբետագրված միջոցները քարտապանի դիմում-պահանջ ներկայացնելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:
8. Բանկը պատասխանատվություն չի կրում բանկոմատի, կանխիկացման, առևտրի/սպասարկման կետի կամ սարքավորման կողմից քարտի սպասարկումը մերժելու կամ դրանց աշխատանքի խափանման հետևանքով Քարտապանին ուղղակի կամ անուղղակի հասցված վնասի համար, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ պատասխանատվությունն ուղղակի սահմանված է օրենքով, և երբ մասնավորապես միաժամանակ առկա են հետևյալ պայմանները.
 - առկա է Բանկի մեղքը,
 - խափանումը/չսպասարկումը տեղի է ունեցել Բանկի աշխատանքային ժամերին,
 - հաճախորդն այցելել է Բանկի Գլխամասային գրասենյակ և/կամ որևէ մասնաճյուղ, սակայն վերջիններս չեն տրամադրել քարտում առկա գումարը կամ պահանջվող մասը կանխիկ եղանակով:
9. Ընդ որում, Բանկի պատասխանատվությունը սահմանափակվում է բացառապես Քարտապանին պատճառված իրական (ուղղակի) վնասի չափով:
9. Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Քարտապանի կրած այն հնարավոր վնասների համար, որոնք կարող են առաջանալ գումարը Քարտապանի քարտին ժամանակային խզումով կամ ուշացումով հասանելի դառնալու կամ ուշացումով ակտիվանալու համար: Մասնավորապես՝ տեխնիկական խնդիրների պատճառով, ինչպես նաև յուրաքանչյուր ամսվա առաջին աշխատանքային օրը գործարքների գումարները կարող են քարտին հասանելի դառնալ սահմանված ժամկետներից ավելի ուշ:

Քարտի փակում

Ուժի մեջ է 07.06.23թ.-ից

1. Քարտի փակման դեպքում (վաղաժամկետ կամ քարտի գործողության ժամկետի ավարտից հետո) Քարտապանը պետք է քարտը ինչպես նաև քարտային փաթեթը (առկայության դեպքում) վերադարձնի Բանկ: Եթե ինչ-որ պատճառով Քարտապանը չի կարող վերադարձնել քարտը, և այն գտնվում է իր մոտ, ապա Քարտապանը պետք է ոչնչացնի քարտը՝ կտրելով մասերի մագնիսական երիզի և չիպի երկայնքով: Բանկը պատասխանատվություն չի կրում քարտը չվերադարձնելու հետևանքով քարտով իրականացված գործարքների համար:
2. Բանկն իրավասու է միակողմանիորեն դադարեցնել քարտի գործողությունը (փակել քարտը) և փակել քարտային հաշիվը հետևյալ դեպքերում՝
 - եթե Քարտապանն ունի քարտի հետ կապված Բանկի նկատմամբ չմարված պարտավորություններ, որոնք արտացոլող քաղվածքը Քարտապանի կողմից ստանալու օրվանից անցել է 30 (երեսուն) օր և ավել,
 - եթե Քարտապանն ունի Բանկի նկատմամբ այլ չմարված պարտավորություններ,
 - Քարտապանի մահվան, սնանկության դեպքերում՝ այդպիսի փաստերի մասին պատշաճ/հիմնավոր ծանուցման հիման վրա,
 - [Վճարային քարտերի սպասարկման պայմաններով](#), [Բանկի հիմնական պայմաններով](#) և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:
3. Քարտը փակելիս այդ քարտի բոլոր հավելյալ քարտերը ևս փակվում են:
4. Բանկի նախաձեռնությամբ քարտը փակելու դեպքում Բանկը կարող է պահանջել Քարտապանից մարել քարտի հետ կապված Բանկի նկատմամբ բոլոր պարտավորությունները:
5. Քարտապանը կարող է միակողմանիորեն դադարեցնել քարտի գործողությունը և փակել քարտային հաշիվը՝ այդ մասին նախապես գրավոր ծանուցելով Բանկին և մարելով քարտի հետ կապված Բանկի նկատմամբ ունեցած պարտավորություններն ամբողջությամբ:
6. Հավելյալ քարտը կարող է փակվել ինչպես Հիմնական քարտապանի, այնպես էլ Հավելյալ քարտապանի նախաձեռնությամբ:
7. Քարտի և (կամ) քարտային փաթեթի գործողությունը վաղաժամկետ դադարելու դեպքում գանձված սպասարկման վճարը չի վերադարձվում:
8. Քարտի փակումը չի դադարեցնում քարտի հետ կապված Քարտապանի՝ Բանկի նկատմամբ ձևավորված պարտավորությունները՝ ներառյալ հաշվարկված տոկոսները և տուժանքները:
9. Քարտապանը պարտավոր է մարել նաև քարտով կատարված այն գործարքների արդյունքում ձևավորված պարտավորությունները, որոնք կատարվել են նախքան քարտի փակումը, սակայն վճարման համար Բանկ են ներկայացվել քարտի փակումից հետո:
10. Քարտի փակումից հետո 3 (երեք) աշխատանքային օր հետո քարտով կատարված բոլոր գործարքների ձևակերպումից հետո քարտին դրական մնացորդի առկայության դեպքում Բանկը փոխանցում է մնացորդի գումարը Քարտապանի՝ Բանկում ունեցած այլ հաշվին:
Իսկ եթե Քարտապանը Բանկում այլ հաշիվ չունի, ապա քարտային հաշվի հետագա սպասարկումն իրականացվում է՝ համաձայն Բանկի ընթացիկ հաշիվների սպասարկման համար սահմանված սակագների, և հաշիվը փակվում է, երբ հաշվի մնացորդը զրոյանում է:

Ընդհանուր դրույթներ

1. Քարտային հաշիվ բացելիս Բանկի հաճախորդի համար բացվում է ՀՀ դրամով ընթացիկ բանկային հաշիվ:
2. ՀՀ դրամով ընթացիկ բանկային հաշվի սպասարկման սակագներին և պայմաններին կարող եք ծանոթանալ [այստեղ](#):
3. Եթե հաճախորդը քարտից և այլ ծառայություններից օգտվում է իր գործատուի համար Բանկի կողմից սահմանված աշխատավարձային նախագծի ներքո, ապա տվյալ քարտի և մյուս բանկային ծառայությունների վրա տարածվում են տվյալ աշխատավարձային նախագծի համար գործող, այդ թվում՝ համաձայնեցված կարգով և դեպքերում հետագա փոփոխություններով արտոնյալ պայմանները և սակագները:
4. «Քարտերի ապահովագրություն» ծառայության մանրամասները, այդ թվում՝ ապահովագրական հատուցումների ստացման կարգն ու պայմանները սահմանվում են Բանկի [«Քարտերի ապահովագրության պայմաններով»](#):
5. Քարտային հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթերն են՝
 - 9.1. ՀՀ քաղաքացի ռեզիդենտ ֆիզիկական անձանց դեպքում անձը հաստատող փաստաթուղթ, հանրային ծառայության համարանիշ/հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք:
 - 9.2. ՀՀ քաղաքացի ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց դեպքում անձը հաստատող փաստաթուղթ:

Ուժի մեջ է 07.06.23թ.-ից

- 9.3. Ոչ ՀՀ քաղաքացի ռեզիդենտ ֆիզիկական անձանց դեպքում անձը հաստատող փաստաթուղթ, հանրային ծառայության համարանիշ/հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք, կոմունալ վճարման անդորրագիր, բնակության վայրից տեղեկանք կամ համարժեք այլ փաստաթուղթ, որտեղ արտացոլված է ֆիզիկական անձի գրանցման/փաստացի բնակության հասցեն:
- 9.4. Ոչ ՀՀ քաղաքացի ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց դեպքում անձը հաստատող փաստաթուղթ, կոմունալ վճարման անդորրագիր, բնակության վայրից տեղեկանք կամ համարժեք այլ փաստաթուղթ, որտեղ արտացոլված է ֆիզիկական անձի գրանցման/փաստացի բնակության հասցեն:
6. Բանկը «Փողերի վաճառման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է սպառողից «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ սպառողին (նման պահանջի առկայության դեպքում):
7. Քարտային հաշվի բացման համար անհրաժեշտ լրացուցիչ փաստաթղթերին և տեղեկություններին կարող էք ծանոթանալ [այստեղ](#):
8. Բանկի կողմից կնքված պայմանագրերը, համաձայնագրերը, համագործակցությունները, կամ անդամակցությունները ուղղակի ազդեցություն կարող են ունենալ հաճախորդների հաշիվների բացման և սպասարման վրա (օրինակ՝ «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն ֆինանսական կազմակերպությունը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում»):
9. Հաշվի քաղվածքը Բանկը տրամադրում է հաճախորդին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և/կամ Հաճախորդի հետ համաձայնեցված պարբերականությամբ և հաղորդակցման եղանակով: «ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՅՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՍ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՅՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍՆԱԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՄՍԻ ՌԵՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՐՆԻՌԻԹՅՈՒՆ»:
10. Քաղվածքը համարվում է Քարտապանի կողմից ընդունված, եթե քաղվածքի ամսաթվից 30 (երեսուն) օրվա ընթացքում Քարտապանը չի ներկայացնում առարկություններ քաղվածքի վերաբերյալ:
11. Հաճախորդի՝ Բանկում ունեցած հաշիվներին առկա միջոցները տնօրինելու Հաճախորդի իրավունքը չի կարող սահմանափակվել, բացառությամբ դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կողմից ներկայացված հայտերի հիման վրա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվում առկա միջոցների նկատմամբ սահմանափակում կիրառվելու (արգելադրվելու), հաշվով գործառնությունները դադարեցվելու դեպքում, ինչպես նաև պայմանագրային հարաբերություններ սահմանող փաստաթղթերով, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:
12. Առանց հաճախորդի կարգադրության՝ հաշվում եղած դրամական միջոցները թույլատրվում է բռնագանձել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված գրության/հայտի հիման վրա, ինչպես նաև հաճախորդի հետ կնքված պայմանագրերով սահմանված կարգով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:
13. Բանկի հեռավար եղանակով սպասարկման պայմանները ներկայացված են [Ֆիզիկական անձանց բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմաններ](#)ի 3-րդ ենթաբաժնում:
14. Բանկային, այդ թվում քարտային, հաշվում առկա դրամական միջոցների մնացորդի հատուցման երաշխավորող է հանդիսանում Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը՝ «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն (գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, 0010 Խորենացի 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն):
15. Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ Բանկում բացված հաշվարկային, ընթացիկ, ժամկետային, խնայողական, քարտային կամ այլ հաշվի վրա գտնվող դրամական միջոցները համարվում են բանկային ավանդ:
16. Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են՝
- միայն ՀՀ դրամով ավանդի առկայության դեպքում երաշխավորված գումարի չափը կազմում է 16 մլն ՀՀ դրամ,
 - միայն արտարժույթային ավանդի առկայության դեպքում երաշխավորված գումարի չափը կազմում է 7 մլն ՀՀ դրամ,
 - եթե հաշվետերը ունի դրամային և արտարժույթային ավանդներ, և դրամային ավանդի գումարը 7 մլն ՀՀ դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդի գումարը՝ մինչև 16 մլն ՀՀ դրամի չափով,

- եթե հաճախորդը ունի դրամային և արժութային ավանդներ, և դրամային ավանդի գումարը պակաս է 7 մլն ՀՀ դրամից, ապա երաշխավորվում է դրամային ավանդը ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 7 մլն դրամի և հատուցված/հատուցվելիք դրամային ավանդի տարբերության չափով: Ընդ որում Բանկում առկա բոլոր
 - դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ,
 - արտարժութային ավանդները համարվում են մեկ ավանդ
17. Քարտի այլ դրույթները, որոնք սահմանված չեն սույն տեղեկատվական ամփոփագրում, կարգավորվում են Վճարային քարտերի սպասարկման պայմաններով, Բանկի հիմնական պայմաններով, Բանկի սակագներով, Բանկի և Քարտապանի միջև պայմանագրային հարաբերություններ սահմանող փաստաթղթերով և ՀՀ օրենսդրությամբ, իսկ ՀՀ օրենսդրությամբ կարգավորված չլինելու դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներով:
18. Բանկի սպասարկման ցանցին, մասնաճյուղերի հասցեներին և աշխատանքային ժամերին կարող էք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ [Սպասարկման ցանց](#):
19. Կողմերի միջև ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
Տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:
Հայտարարություն՝ ֆիզիկական անձը հնարավորություն ունի ներկայացնելու ֆինանսական կազմակերպության և սպառողի միջև կնքվող գործարքից բխող պահանջները **Ֆինանսական համակարգի հաշտարարին:** «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ կնքել է համաձայնագիր, որը տարածվում է միայն այն պահանջների վրա, որոնց գույքային պահանջի չափը չի գերազանցում 250.000 ՀՀ դրամ կամ դրան համարժեք արտարժույթը և գործարքի գումարի չափը չի գերազանցում 500.000 ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը:
20. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ և ՁԵՁ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է»:
Կայքի հղումն է www.fininfo.am:

Քարտի և PIN կոդերի թողարկում, վերաթողարկում, տրամադրում և ակտիվացում

1. Քարտով, ինչպես նաև առկայության դեպքում՝ հավելյալ քարտ(եր)ով կատարվող գործարքների համար միջոցների շրջանառությունը ապահովվելու նպատակով Բանկը վարում է քարտային հաշիվ:
2. Քարտային հաշիվը բացվում է Հիմնական քարտապանի անունով:
3. Քարտային հաշիվը բացվում է ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով կամ եվրոյով:
4. Քարտի տրամադրման գործընթացը կազմակերպվում է քարտի պատվիրման հայտը Քարտապանի կողմից Բանկ ներկայացնելուց հետո.
 - 4.1 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում՝ Բանկի գլխամասային գրասենյակի կամ երևանյան որևէ մասնաճյուղի տարածքում կամ Երևանում գտնվող պահատուփի միջոցով տրամադրելու դեպքում,
 - 4.2 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում՝ Երևան քաղաքից դուրս գտնվող Բանկի մասնաճյուղի տարածքում տրամադրելու դեպքում,
 - 4.3 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում՝ Երևան քաղաքից դուրս գտնվող պահատուփի միջոցով տրամադրելու դեպքում:

Բանկի սակագներով սահմանված դեպքերում քարտը կարող է տրամադրվել ավելի կարճ ժամկետում:
5. PIN կոդը Քարտապանի կողմից սահմանվելու դեպքում OTP-ն SMS հաղորդագրությամբ ուղարկվում է Քարտապանի՝ Բանկին նախօրոք գրավոր տրամադրված բջջային հեռախոսահամարին Քարտապանի կողմից բանկոմատի միջոցով քարտն ակտիվացնելու համապատասխան հրահանգները կատարելու գործընթացում: Ստացված OTP-ն Քարտապանի կողմից պետք է մուտքագրվի բանկոմատի համապատասխան դաշտում, որից հետո Քարտապանը կարող է ինքնուրույն սահմանել PIN կոդը: PIN կոդը կարող է սահմանվել քարտը սպասարկող վճարային համակարգի մասնակից հանդիսացող Բանկի բանկոմատի

Ուժի մեջ է 07.06.23թ.-ից

միջոցով, եթե տվյալ բանկումատը հազեցած է համապատասխան տեխնիկաձրագրային լուծումներով: PIN կողը Քարտապանի կողմից սահմանելու գործընթացի բարեհաջող իրականացման անհնարինություն, այդ թվում՝ սահմանված ժամկետում OTP-ն չստանալու դեպքում Քարտապանը պետք է անմիջապես տեղեկացնի Բանկին:

6. Քարտի PIN կողը Քարտապանի կողմից՝ OTP-ի կիրառման միջոցով սահմանելու տարբերակով քարտը թողարկելուց հետո տվյալ քարտի PIN կողի ստացման նախընտրելի եղանակը չի կարող փոխվել: Նման անհրաժեշտություն առաջանալու դեպքում, այդ թվում՝ եթե տեխնիկական պատճառներով Քարտապանը չի ստացել OTP-ն, և տեխնիկական պատճառը չի վերացվել, քարտը ենթակա է վերաթողարկման՝ PIN կողը Բանկի կողմից տրամադրման տարբերակով:
7. Քարտը ստանալուն/հասանելի դառնալուն պես Քարտապանը պետք է ստուգի քարտի տեղեկատվության համապատասխանությունը քարտի պատվիրման հայտին, ծրարի փակ և անվնաս լինելը, քարտի և PIN կողի (վերջինս Բանկի կողմից տրամադրվելու դեպքում) առկայությունը ծրարում, ինչպես նաև քարտի վրա նշված տվյալների ճշտությունը: Քարտապանի կողմից ցանկացած անհամապատասխանության հայտնաբերման դեպքում Քարտապանը պետք է անմիջապես տեղեկացնի Բանկին:
8. Քարտի պատվիրման կամ քարտի վերաթողարկման օրվանից 60 (վաթսուն) օրվա ընթացքում քարտը (ներառյալ՝ Պայմաններում նշված պատճառներով առաքումից վերադարձված քարտերը) Քարտապանի կողմից չստանալու դեպքում Բանկն իրավասու է փակել և ոչնչացնել քարտը:
9. Բանկի կողմից տրամադրվող PIN կողով քարտերի դեպքում քարտը և PIN կողը քարտի առաքման հասցեով առաքման եղանակով ստանալուց հետո քարտն ակտիվացնելու համար Քարտապանը պետք է զանգահարի Բանկ:
10. Բանկի կողմից տրամադրվող PIN կողով քարտն ակտիվացվում է հետևյալ ժամկետներում և կարգով՝
 - 10.1 Բանկի տարածքում քարտի տրամադրման դեպքում՝ քարտը և PIN կողը Քարտապանի կողմից ստանալուց հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում,
 - 10.2 քարտի առաքման հասցեով առաքման եղանակով քարտի տրամադրման դեպքում՝ քարտը ակտիվացնելու համար Քարտապանի և Բանկի միջև կապ հաստատվելուց հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում՝ Բանկի կողմից Քարտապանին պատշաճ նույնականացման պարագայում:

Քարտով կատարվող գործարքներ

1. Քարտով իրականացվում են հետևյալ տեսակի գործարքները, եթե առանձին տեսակի քարտերի համար Բանկի կողմից սահմանված պայմաններով, սակագներով և (կամ) պայմանագրերով սահմանափակումներ նախատեսված չեն՝
 - 1.1 կանխիկի մուտքագրում՝ քարտով/քարտին կանխիկ մուտքի հնարավորություն ունեցող սարքավորման միջոցով, ինչպես նաև Բանկի դրամարկղում,
 - 1.2 կանխիկի ելքագրում՝ քարտով/քարտից կանխիկի ելքի հնարավորություն ունեցող բանկոմատի կամ սարքավորման, POS տերմինալի միջոցով, ինչպես նաև Բանկի դրամարկղում,
 - 1.3 փոխանցում՝ բանկոմատի միջոցով, բանկերում, ինչպես նաև բանկերի կայքերի և հեռակառավարվող համակարգերի և ArCa առցանց վճարային համակարգի միջոցով,
 - 1.4 անկանխիկ եղանակով վճարում ապրանքների և ծառայությունների դիմաց՝ առևտրի/սպասարկման կետերում, ներառյալ՝ ինտերնետ միջավայրում:
2. ՀՀ բանկերի բանկոմատների միջոցով կանխիկի ելքագրման մեկ գործարքի գումարը չի կարող գերազանցել 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը:
3. Կանխիկի մուտքագրման սարքավորման հնարավորություններն ու սահմանափակումները՝ կապված մուտքագրվող գումարի արժույթի, թղթադրամի արժողության/տեսակի հետ և այլն, սահմանվում են տվյալ սարքավորման սպասարկող կազմակերպության և (կամ) վճարային համակարգի կողմից, և նման տեղեկատվությունը որպես կանոն ներկայացված է այդ սարքավորման վրա:

Ուժի մեջ է 07.06.23թ.-ից

4. Քարտով դրամական միջոցների, այդ թվում՝ վարկային միջոցների շարժը (մուտքագրումներ, ելքագրումներ), կանխիկ և անկանխիկ եղանակով օգտագործումը իրականացվում է համաձայն Պայմանների և ArCa, VISA, MasterCard վճարային համակարգերի կողմից սահմանված պայմանների և կանոնների:
5. VISA և MasterCard վճարային համակարգերի կողմից համապատասխան քարտատեսակների համար սահմանվող արտոնությունները, հնարավորությունները, հավելյալ ծառայությունները, այդ թվում դրանց գծով գանձվող վճարները, սահմանափակումները կարգավորվում են Պայմաններով և վճարային համակարգերի կողմից սահմանված պայմաններով և կանոններով, որոնք հասանելի են հետևյալ հղումներով՝ https://cis.visa.com/ru_TJ/visa-in-armenia.html, <https://www.mastercard.am/en-am.html>

Հավելյալ քարտ

1. Քարտապանը (Հիմնական քարտապան) կարող է իր քարտին (հիմնական քարտ) կից Բանկից ստանալ հավելյալ քարտ(եր) ինչպես իր համար, այնպես էլ երրորդ անձի համար:
2. Հավելյալ քարտը կարող է տարբեր լինել հիմնական քարտի տեսակից, սակայն պետք է քարտի դասով լինի հիմնական քարտին հավասար կամ ավելի ցածր դասի:
3. Վարկային քարտին կից տրամադրվում է բացառապես վարկային հավելյալ քարտ:
4. Հավելյալ քարտի համար առանձին քարտի գաղտնաբառ չի կիրառվում: Հավելյալ քարտով՝ քարտի գաղտնաբառի կիրառմամբ նախատեսված գործողություններն իրականացվում են Հիմնական քարտապանի կողմից՝ հիմնական քարտի գաղտնաբառով:
5. Հավելյալ քարտը առաքման եղանակով տրամադրելու դեպքում, եթե սույն Պայմանների համաձայն քարտի ակտիվացման նպատակով քարտի և PIN կոդի ստացումը հաստատելու համար նախատեսված է Բանկի և Քարտապանի միջև կապի հաստատում, ապա դա պետք է տեղի ունենա Բանկի և Հիմնական քարտապանի միջև: Հավելյալ քարտով կատարվող գործարքները հաշվառվում և արտացոլվում են հիմնական քարտի քարտային հաշվում:
6. Հավելյալ քարտով կատարվող գործարքները հաշվառվում և արտացոլվում են հիմնական քարտի քարտային հաշվում:
7. Հիմնական քարտով և հավելյալ քարտ(եր)ով կատարված գործարքների հանրագումարը չպետք է գերազանցի հիմնական քարտի համար սահմանված վճարային սահմանաչափը:
8. Հիմնական քարտապանը յուրաքանչյուր հավելյալ քարտի համար կարող է սահմանել առանձին ամսական վճարային սահմանաչափ:
9. Հիմնական և հավելյալ քարտերով իրականացված բոլոր գործարքների արդյունքում Բանկի նկատմամբ ձևավորված պարտավորությունները հանդիսանում են Հիմնական քարտապանի պարտավորությունները:
10. Հավելյալ քարտի գործողության ժամկետն ավարտվելու հիմքով հավելյալ քարտը Բանկի կողմից վերաթողարկվում է սույն Պայմաններով նախատեսված կարգով: Վերաթողարկված հավելյալ քարտը Բանկի կողմից կարող է տրամադրվել Հավելյալ քարտապանին՝ առանց Հիմնական քարտապանին նախապես տեղեկացնելու:
11. Հավելյալ քարտապան(ներ)ը պարտավորվում է(են) տեղեկացնել Բանկին Հիմնական քարտապանի մահվան, անգործունակության, անվճարունակության կամ սնանկության դեպքերում և չօգտագործել քարտը նման տեղեկատվություն ունենալու դեպքում:

Քարտի օգտագործման և անվտանգության կանոններ

1. Քարտապանն իրավունք չունի փոխանցել քարտը, հայտնել OTP-ն, PIN կոդը, քարտի գաղտնաբառը, CVV/CVC կոդը այլ անձանց: Քարտապանը պարտավոր է ձեռնարկել միջոցներ, որպեսզի քարտը, OTP-ն, PIN կոդը, քարտի գաղտնաբառը, CVV/CVC կոդը, քարտի վրա նշված տեղեկատվությունը տեսանելի կամ այլ կերպ հասանելի չլինեն այլ անձանց:
2. Քարտապանի կողմից քարտի PIN կոդը սահմանելիս խորհուրդ է տրվում ընտրել հնարավորինս բարդ ծածկագիր, այդ թվում՝ չօգտագործել իրար հաջորդող կամ կրկնվող թվեր:
3. Արգելվում է ինտերնետ միջավայրում (վիրտուալ առևտրի կետերում) մուտքագրել (հայտնել) PIN կոդը: PIN կոդը հայտնելու դեպքում անհրաժեշտ է անմիջապես դադարեցնել գործարքը, տեղեկացնել Բանկին և բլոկավորել քարտը:
4. Չի կարելի օգտվել այն բանկոմատներից, կանխիկացման և առևտրի/սպասարման կետերից և սարքավորումներից, որոնք հաճախորդի կարծիքով վստահելի չեն կամ կասկած են առաջացնում, ինչպես նաև եթե դրանց քարտ ընթերցող սարքին, ստեղնաշարին կամ կանխիկի տրամադրման պատուհանին միացված են լրացուցիչ սարքավորումներ, հաղորդալարեր, կաշուն ժապավեններ և այլ կասկածելի իրեր:
5. Ինտերնետ միջավայրում քարտով գործարք կատարելիս Քարտապանը պետք է նախապատվություն տա ապահով վճարում նախատեսող կայքերին (secure-payment website): Առցանց խաղատները, բուքմեյքերական գրասենյակները համարվում են առավել ռիսկային:
6. Քարտի, OTP-ի, PIN կոդի, և գաղտնաբառի օգտագործման հետ կապված ամբողջ ռիսկը կրում է Քարտապանը:
7. Քարտով գործարքների իրականացման ժամանակ Քարտապանը պետք է մուտքագրի PIN կոդը, եթե գործարքի կատարման համար օգտագործվող սարքավորման միջոցով տվյալ տեսակի քարտով գործարքի իրականացման համար պահանջվում է PIN կոդի մուտքագրում: Ինտերնետ միջավայրում (վիրտուալ առևտրի կետերում) քարտով գործարքների իրականացման ժամանակ PIN կոդի մուտքագրում չի պահանջվում: Անհայում քարտով և Ստիկերով ՀՀ տարածքում մինչև 20,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթով օրական առավելագույնը 5 (հինգ) գործարք կատարելու դեպքում PIN կոդի մուտքագրում չի պահանջվում: ՀՀ տարածքից դուրս անհայում գործարքների դեպքում PIN կոդի մուտքագրման պահանջը կարգավորվում է համապատասխան վճարային համակարգի՝ տվյալ երկրի համար գործող պայմաններով և կանոններով:
8. Ինտերնետ միջավայրում քարտով գործարք կատարելիս Քարտապանը պետք է նախապատվություն տա ապահով վճարում նախատեսող կայքերին (secure-payment website): Առցանց խաղատները, բուքմեյքերական գրասենյակները համարվում են առավել ռիսկային: Քարտի անվտանգությունն ապահովելու նպատակով:
9. Քարտի անվտանգությունն ապահովելու նպատակով Քարտապանը իր ցանկությամբ քարտի գործողության ընթացքում ցանկացած պահի կարող է սահմանել և փոխել քարտով գործարքների սահմանափակումներ՝ ըստ գործարքի տեսակի և (կամ) ըստ գործարքի կատարման աշխարհագրության: Սահմանափակումը կիրառվում է միայն հավաստագրվող գործարքների համար: Քարտի վերաթողարկման դեպքում նախկինում սահմանված սահմանափակումները չեն փոխանցվում վերաթողարկված քարտին և ենթակա են կրկին սահմանման վերաթողարկված քարտի համար Քարտապանի կողմից՝ Բանկ ներկայացնելով սահմանված ձևանմուշով համապատասխան հանձնարարական:
10. Ելնելով անվտանգության նկատառումներից՝ Բանկն իրավասու է արգելել կամ սահմանափակել առավել ռիսկային երկրներում քարտի կիրառմամբ գործարքների կատարումը:
11. Քարտի անվտանգությունն ապահովելու նպատակով Քարտապանի ցանկությամբ՝ Բանկը Քարտապանին՝ վերջինիս՝ Բանկում գրանցված հեռախոսահամարին, ուղարկում է քարտով կատարված գործարքների մասին SMS հաղորդագրություն՝ Բանկում գործող սակագների համաձայն: 10,000 ՀՀ դրամ (կամ համարժեք արտարժույթ) և ավելի գումարով գործարքների համար SMS հաղորդագրության ծառայությունը քարտի տրամադրման պահից լռելյայն ակտիվացվում և տրամադրվում է Բանկի կողմից, քանի դեռ Քարտապանը Բանկ ներկայացվող համապատասխան հանձնարարականով չի հրաժարվել այդ ծառայությունից: Հավելյալ քարտով կատարված գործարքների մասին SMS հաղորդագրություն կարող է ուղարկվել Հավելյալ քարտապանին՝ Հիմնական քարտապանի համաձայնության առկայության պարագայում: Քարտով իրականացված գործարքների մասին SMS հաղորդագրության ծառայությունից

Ուժի մեջ է 07.06.23թ.-ից

օգտվելը զգալիորեն բարձրացնում է Քարտի ապօրինի օգտագործման կանխարգելման հնարավորությունները, քանի որ նման գործարքների մասին հաղորդագրություն ստանալով՝ Քարտապանը կարող է անհապաղ տեղեկացնել Բանկին և կանխել քարտի հետագա ապօրինի օգտագործումը: Բանկը պատասխանատվություն չի կրում քարտի օգտագործումից բխող Քարտապանի հնարավոր կորուստների և վնասների համար, եթե Քարտապանը չի ստացել քարտով կատարված գործարքների մասին SMS հաղորդագրությունը բջջային կապի անհասանելիության, հեռահաղորդակցության ցանցի դանդաղության, բջջային կապի ծածկույթի սահմանափակման, կապի խափանումների և ընդհատումների դեպքում, ինչպես նաև ըստ գործարքների տեսակների՝ վճարային համակարգերի կարգաբերումների արդյունքում:

12. Քարտով կատարված գործարքի վերաբերյալ SMS հաղորդագրություն ստանալիս Քարտապանը պետք է ստուգի գործարքի գումարը և կարգավիճակը՝ (կատարված, մերժված և այլն): Գործարքի հետ համաձայն չլինելու դեպքում Քարտապանը պարտավոր է անհապաղ տեղեկացնել այդ մասին Բանկին՝ անհրաժեշտության դեպքում բլոկավորելով քարտը
13. Քարտապանը պարտավոր է SMS հաղորդագրության ծառայության, ինչպես նաև բջջային հեռախոսահամարի օգտագործմամբ Բանկի կողմից հասանելի դարձվող այլ ծառայությունների ([այդ թվում՝ USSD ծառայության](#)) համար Քարտապանի՝ Բանկում գրանցված բջջային հեռախոսահամարի փոփոխության դեպքում անմիջապես տեղեկացնել Բանկին: Քարտապանի կողմից բջջային հեռախոսահամարի փոփոխության մասին Բանկին չտեղեկացնելու հետևանքով երրորդ անձանց տեղեկատվության հասանելի դառնալը չի համարվում բանկային գաղտնիք կազմող տեղեկատվության հրապարակում: Քարտապանի հեռախոսը երրորդ անձանց հասանելի դառնալու պարագայում դրանում պահվող տվյալները կամ հեռախոսի միջոցով ձեռքբերվող տեղեկատվությունը բացահայտվելու դեպքում Բանկը պատասխանատվություն չի կրում:
14. Ամփոփագրում սահմանված կանոնների և պահանջների խախտումով՝ քարտով կատարված գործարքների, ինչպես նաև քարտի, OTP-ի, PIN կոդի, գաղտնաբառի, քարտի վրա նշված տեղեկատվության (քարտի համար, CVV/CVC կոդ, վավերության ժամկետ) օգտագործման, երրորդ անձանց տրամադրման կամ հայտնի դառնալու հետևանքով Քարտապանի կրած վնասների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում:
15. Բանկը պարտավոր է հաճախորդի հետ պայմանագիր կնքելիս վերջինիս տրամադրել [Վճարային քարտերի սպասարկման պայմանները և օգտագործման կանոնները](#), որտեղ ներկայացված են քարտի օգտագործման և անվտանգության ամբողջական կանոնները:

Քարտի կորուստ, գողություն, զեղծարարություն (կամ կասկած)

1. Քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) դեպքում Քարտապանը պարտավոր է անմիջապես այդ մասին տեղեկացնել Բանկին կամ ArCa պրոցեսինգային կենտրոնին՝ կապ հաստատելով հետևյալ ցանկացած եղանակով՝
2. քարտի վրա նշված հեռախոսահամարով,
3. Բանկի շուրջօրյա (+374 10) 56 11 11 և (+374 12) 56 11 11 հեռախոսահամարներով,
4. ArCa պրոցեսինգային կենտրոնի (+374 10) 59 22 22 հեռախոսահամարով,
5. Բանկի cardsupport@ameriabank.am էլեկտրոնային փոստի հասցեով,
6. այցելություն Բանկի ցանկացած մասնաճյուղ՝ Բանկի գործառնական ժամերին,
7. Քարտապանի՝ Բանկում գրանցված հեռախոսահամարից հավաքելով *116# կոդը:
8. Քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) մասին ստացված տեղեկատվության հիման վրա Բանկը բլոկավորում է քարտը նման տեղեկատվություն ստանալու պահից առավելագույնը 15 րոպեի ընթացքում:
9. Քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) մասին Բանկին տեղեկացնելուց հետո Քարտապանը պարտավոր է ողջամիտ ժամկետում այդ մասին նաև գրավոր տեղեկացնել Բանկին: Պատշաճ տեղեկացման պահ է համարվում գրավոր տեղեկացումը:
10. Մինչև քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) մասին Բանկին տեղեկացնելը և Բանկի կողմից քարտը 8 կետում սահմանված ժամկետում բլոկավորելը քարտով կատարված գործարքների համար պատասխանատվությունը կրում է Քարտապանը:
11. Քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) մասին Բանկին տեղեկացնելուց հետո քարտով իրականացված՝ հավաստագրում չպահանջող գործարքների, այդ թվում՝ ինտերնետ միջավայրում կատարված գործարքների համար պատասխանատվությունը կրում է Քարտապանը: Առանց

հավաստագրման կատարված գործարքների բողոքարկումը հնարավոր դարձնելու համար Քարտապանի համապատասխան դիմումի հիման վրա Բանկը տվյալ վճարային համակարգի կանոններով սահմանված ժամկետում քարտը ներառում է առաջիկա Stop-ցուցակում՝ համաձայն Բանկի սակագների:

12. Քարտապանը պարտավոր է հատուցել քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) մասին Բանկին չտեղեկացնելու, ինչպես նաև մինչև Բանկին տեղեկացնելը երրորդ անձանց կողմից քարտի օգտագործման հետևանքով Բանկի կրած ծախսերը, կորուստները և վնասները:
13. Քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) դեպքում խորհուրդ է տրվում վերաթողարկել քարտը: Եթե Քարտապանը ցանկանում է շարունակել օգտագործել նման քարտը, ապա պետք է Բանկ ներկայացնի քարտի ապաբովանդակման դիմում: Այս դեպքում քարտի օգտագործման հետ կապված հնարավոր կորուստների և վնասների համար պատասխանատվությունը կրում է Քարտապանը:

Քարտի բլոկավորում, ապաբլոկավորում

1. Գործարք կատարելիս PIN կոդը հաջորդաբար 3 (երեք) անգամ սխալ հավաքելու դեպքում քարտը կարող է բլոկավորվել և/կամ առգրավվել: Քարտը կարող է առգրավվել նաև Բանկումատից դուրս գալուց հետո 20 (քսան) վայրկյանի ընթացքում քարտը չվերցնելու դեպքում, ինչպես նաև Բանկումատի տեխնիկական խնդիրների և քարտը վնասված լինելու պատճառով:
2. Բանկն իրավունք ունի իր հայեցողությամբ կասեցնել քարտով գործարքների իրականացումը (քարտի բլոկավորում) ինչպես նաև մինչև 120 օր ժամկետով կասեցնել քարտային հաշվի և/կամ դրան մուտքագրված գումարի՝ հաճախորդի կողմից տնօրինման հնարավորությունը, ինչպես նաև մերժել փոխանցված գումարի մուտքագրումը քարտային հաշվին և/կամ առանց հաճախորդի լրացուցիչ հանձնարարության՝ քարտային հաշվից ելքագրել և հետ փոխանցել այդ գումարը փոխանցող կողմին հետևյալ դեպքերում՝
3. Քարտին կամ քարտային հաշվին փոխանցված կամ մուտքագրված գումարի հետ կապված Բանկն ունի տեղեկատվություն կամ կասկածներ՝ զեղծարար գործարք կամ գործարքների շղթայի մաս լինելու վերաբերյալ, այդ թվում միջազգային վճարային համակարգերից ստացված զեղծարարության հաշվետվություններում խնդրահարույց գործարքը նույնականացնող տվյալների առկայության դեպքում,
 - 3.1 Բանկը գումարը փոխանցող բանկից ստանում է տեղեկատվություն և գրավոր պահանջ՝ փոխանցման գործարքը որպես զեղծարար որակելու և Հաճախորդին փոխանցված գումարը հետ վերադարձնելու մասին,
 - 3.2 Փոխանցումը կապված է կրիպտոարժույթով գործարքի հետ, և/կամ գործարքի կողմ է կրիպտոարժույթի հետ կապված գործունեություն իրականացնող անձ:
 - 3.3 Եթե Քարտապանն ունի Բանկի նկատմամբ չմարված պարտավորություններ,
 - 3.4 Բանկի [հիմնական պայմաններով](#) սահմանված այլ դեպքերում:

- 4 Եթե բանկումատի միջոցով քարտով գործարք կատարելիս քարտը բանկումատում առգրավվել է, և քարտի առգրավման պատճառի մասին որևէ հաղորդագրություն չի արտացոլվում էկրանին կամ անդորրագրի վրա, Քարտապանը պետք է անմիջապես զանգահարի Բանկ և համոզվի, որ քարտը բլոկավորվել է: Եթե քարտը չի բլոկավորվել, անհրաժեշտ է անհապաղ բլոկավորել այն:
- 5 Բլոկավորված քարտը Բանկի կողմից ապաբլոկավորվում է Քարտապանի գրավոր հանձնարարականի հիման վրա այն ստանալուց հետո նույն աշխատանքային օրվա ընթացքում, եթե այլ բան նախատեսված չէ [Վճարային քարտերի սպասարկման պայմաններում](#) և [Բանկի հիմնական պայմաններում](#): Բանկի նախաձեռնությամբ բլոկավորված քարտը Բանկի կողմից ապաբլոկավորվում է, երբ վերանում է քարտը բլոկավորելու հիմքը, այն վերանալուց հետո նույն աշխատանքային օրվա ընթացքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն Պայմանագրում և Բանկի հիմնական պայմաններում:

Քարտով կատարված գործարքների բողոքարկում

1. Քաղվածքը համարվում է Քարտապանի կողմից ընդունված, եթե քաղվածքի ամսաթվից 30 (երեսուն) օրվա ընթացքում Քարտապանը չի ներկայացնում առարկություններ քաղվածքի վերաբերյալ:
2. Առևտրի/սպասարկման կետում կատարված գործարքի չեղարկումից հետո Քարտապանը կարող է Բանկ ներկայացնել բողոքարկման հայտ, եթե չեղարկված գործարքի գումարը առևտրի/սպասարկման կետի կողմից չի վերադարձվել տվյալ առևտրի/սպասարկման կետի կողմից սահմանված ժամկետում կամ հետևյալ ժամկետում՝
 - 2.1 ՀՀ տարածքում կատարված գործարքների համար՝ չեղարկման օրվանից 10 (տասը) օր,
 - 2.2 ՀՀ տարածքից դուրս կատարված գործարքների համար՝ 30 (երեսուն) օր:
3. Բանկը պատասխանատվություն չի կրում Քարտապանի կողմից քարտով կատարված գործարքների համար, սակայն պատրաստ է հնարավորության սահմաններում օժանդակել Քարտապանի կողմից ներկայացված խնդրի կարգավորմանը: Խնդիրը չկարգավորվելու դեպքում Քարտապանը չի ազատվում Բանկի նկատմամբ ունեցած իր պարտավորություններից:
4. Բանկը պատասխանատվություն չի կրում Քարտապանի կողմից քարտով կատարված գործարքների համար, սակայն պատրաստ է ՀՀ օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով ընդունվելի սահմաններում օժանդակել Քարտապանի կողմից ներկայացված խնդրի կարգավորմանը: Խնդիրը չկարգավորվելու դեպքում Քարտապանը չի ազատվում Բանկի նկատմամբ ունեցած իր պարտավորություններից:
5. Առևտրի/սպասարկման կետում իրականացված գործարքի բողոքարկումը չի հանդիսանում Բանկի նկատմամբ բողոքի կամ բողոք-պահանջի ներկայացում, և Բանկի դերակատարումը սահմանափակվում է համապատասխան խնդրի կարգավորմանը միջնորդությամբ և օժանդակությամբ:
6. Եթե բողոքարկման գործընթացի արդյունքում պարզվում է, որ գործարքը կատարվել է Քարտապանի կողմից կամ Քարտապանի կողմից քարտի օգտագործման կանոնների խախտման հետևանքով, Քարտապանից գանձվում է Բանկի սակագներով սահմանված վճար:
7. Բողոքարկման հայտի պատասխանը Բանկը Քարտապանին տրամադրում է հետևյալ ժամկետներում՝
 - 7.1 ArCa վճարային համակարգում կատարված գործարքների դեպքում՝ հայտի ստացման օրվանից 40 (քառասուն) օրվա ընթացքում,
 - 7.2 միջազգային վճարային համակարգերում կատարված գործարքների դեպքում՝ հայտի ստացման օրվանից 60 (վաթսուն) օրվա ընթացքում,
 - 7.3 Բանկի բանկումատներով կատարված կանխիկ գումարի մուտքագրման կամ ելքագրման գործարքների բողոքարկման դեպքում (եթե բանկումատը չի տրամադրել կանխիկ գումարը, սակայն այն նվազեցվել է քարտային հաշվից, կամ Քարտապանը մուտքագրել է կանխիկ գումար, սակայն քարտային մնացորդը չի ավելացել) հայտի ստացման օրվանից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:
8. Անհպում գործարքների բողոքարկման դեպքում Բանկը հատուցում է Քարտապանի հաշվից դեբետագրված միջոցները Քարտապանի բողոքարկման հայտը ստանալուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում՝ պայմանով, որ պահպանվել են քարտի օգտագործման և անվտանգության կանոնները, իսկ նշված կանոնները պահպանված չլինելու դեպքում բողոքարկման հայտի պատասխանը Բանկը Քարտապանին տրամադրում է Պայմանագրով սահմանված ժամկետում:

9. Բանկը պատասխանատվություն չի կրում բանկումատի, կանխիկացման, առևտրի/սպասարկման կետի կամ սարքավորման կողմից քարտի սպասարկումը մերժելու կամ դրանց աշխատանքի խափանման հետևանքով Քարտապանին ուղղակի կամ անուղղակի հասցված վնասի համար, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ պատասխանատվությունն ուղղակի սահմանված է օրենքով, և երբ մասնավորապես միաժամանակ առկա են հետևյալ պայմանները.
- 9.1 առկա է Բանկի մեղքը,
- 9.2 խափանումը/չսպասարկումը տեղի է ունեցել Բանկի աշխատանքային ժամերին,
- 9.3 հաճախորդն այցելել է Բանկի գլխամասային գրասենյակ և/կամ որևէ մասնաճյուղ, սակայն վերջիններս չեն տրամադրել քարտում առկա գումարը կամ պահանջվող մասը կանխիկ եղանակով:
- 9.4 Ընդ որում, Բանկի պատասխանատվությունը սահմանափակվում է բացառապես Քարտապանին պատճառված իրական (ուղղակի) վնասի չափով:
10. Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Քարտապանի կրած այն հնարավոր վնասների համար, որոնք կարող են առաջանալ գումարը Քարտապանի քարտին/քարտային հաշվին ժամանակային խզումով կամ ուշացումով հասանելի դառնալու կամ ուշացումով ակտիվանալու կամ քարտային հաշվին ուշացումով հաշվառվելու համար, ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ պայմանավորված տեխնիկական խնդիրների կամ խափանումների և/կամ երրորդ անձանց, այդ թվում՝ վճարային համակարգերի կողմից կատարման ենթակա գործողությունների հետաձգման, ուշացման կամ չկատարման հանգամանքներով: Նման հանգամանքներից ելնելով՝ այդ թվում՝ հնարավոր է, որ յուրաքանչյուր ամսվա առաջին աշխատանքային օրը գործարքների գումարները քարտին հասանելի դառնան սահմանված ժամկետներից ավելի ուշ:

Քարտի փակում

1. Քարտի փակման դեպքում (վաղաժամկետ կամ քարտի գործողության ժամկետի ավարտից հետո) Քարտապանը պետք է քարտը վերադարձնի Բանկ: Եթե ինչ-որ պատճառով Քարտապանը չի կարող վերադարձնել քարտը, և այն գտնվում է իր մոտ, ապա Քարտապանը պետք է ոչնչացնի քարտը՝ կտրելով մասերի մագնիսական երիզի և չիպի երկայնքով: Բանկը պատասխանատվություն չի կրում քարտը չվերադարձնելու հետևանքով քարտով իրականացված գործարքների համար:
2. Բանկն իրավասու է սույն Պայմաններով և Բանկի կողմից հաստատված ներքին իրավական ակտերով սահմանված կարգով միակողմանիորեն դադարեցնել քարտի գործողությունը (փակել քարտը) և/կամ փակել քարտային հաշիվը հետևյալ դեպքերում՝
- 2.1 եթե Քարտապանն ունի քարտի հետ կապված Բանկի նկատմամբ չմարված պարտավորություններ, որոնք արտացոլող քաղվածքը Քարտապանի կողմից ստանալու օրվանից անցել է 30 (երեսուն) օր և ավել,
- 2.2 եթե Քարտապանն ունի Բանկի նկատմամբ այլ չմարված պարտավորություններ,
- 2.3 Քարտապանի մահվան, սնանկության դեպքերում՝ այդպիսի փաստերի մասին պատշաճ/հիմնավոր ծանուցման հիման վրա,
- 2.4 [Պայմաններով](#), [Բանկի հիմնական պայմաններով](#) և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:
3. Քարտը փակելիս այդ քարտի բոլոր հավելյալ քարտերը ևս փակվում են:
4. Քարտապանը կարող է միակողմանիորեն դադարեցնել քարտի գործողությունը և փակել քարտային հաշիվը՝ այդ մասին նախապես գրավոր ծանուցելով Բանկին և մարելով քարտի հետ կապված Բանկի նկատմամբ ունեցած պարտավորություններն ամբողջությամբ:
5. Հավելյալ քարտը կարող է փակվել ինչպես Հիմնական քարտապանի, այնպես էլ Հավելյալ քարտապանի կողմից:
6. Քարտի և (կամ) քարտային փաթեթի գործողությունը վաղաժամկետ դադարելու դեպքում գանձված սպասարկման վճարը չի վերադարձվում:
7. Քարտի փակումը չի դադարեցնում քարտի հետ կապված Քարտապանի՝ Բանկի նկատմամբ ձևավորված պարտավորությունները՝ ներառյալ հաշվարկված տոկոսները և տուժանքները:
8. Քարտապանը պարտավոր է մարել նաև քարտով կատարված այն գործարքների արդյունքում ձևավորված պարտավորությունները, որոնք կատարվել են նախքան քարտի փակումը, սակայն վճարման համար Բանկ են ներկայացվել քարտի փակումից հետո:

9. Քարտի փակումից հետո 3 (երեք) աշխատանքային օր հետո քարտով կատարված բոլոր գործարքների ձևակերպումից հետո քարտին դրական մնացորդի առկայության դեպքում Բանկը փոխանցում է մնացորդի գումարը Քարտապանի՝ Բանկում ունեցած այլ հաշվին ստորև նշված հերթականությամբ՝ ըստ հաշվի առկայության՝

9.1 նույն արժույթով ընթացիկ հաշվին,

9.2 նույն արժույթով այլ քարտային հաշվին,

9.3 ՀՀ դրամով ընթացիկ հաշվին,

9.4 ՀՀ դրամով այլ քարտային հաշվին,

9.5 այլ արտարժույթային ընթացիկ հաշվին,

9.6 այլ արտարժույթային քարտային հաշվին:

Իսկ եթե Քարտապանը Բանկում այլ հաշիվ չունի, ապա քարտային հաշվի հետագա սպասարկումն իրականացվում է՝ համաձայն Բանկի ընթացիկ հաշիվների սպասարկման համար սահմանված սակագների, և հաշիվը փակվում է, երբ հաշվի մնացորդը զրոյանում է:

Ընդհանուր դրույթներ

1. Քարտային հաշիվ բացելիս Բանկի հաճախորդի համար բացվում է ՀՀ դրամով ընթացիկ բանկային հաշիվ:

2. ՀՀ դրամով ընթացիկ բանկային հաշվի սպասարկման սակագներին և պայմաններին կարող էք ծանոթանալ [այստեղ](#):

3. Եթե հաճախորդը քարտից և այլ ծառայություններից օգտվում է իր գործատուի համար Բանկի կողմից սահմանված աշխատավարձային նախագծի ներքո, ապա տվյալ քարտի և մյուս բանկային ծառայությունների վրա տարածվում են տվյալ աշխատավարձային նախագծի համար գործող, այդ թվում՝ համաձայնեցված կարգով և դեպքերում հետագա փոփոխություններով արտոնյալ պայմանները և սակագները:

4. «Քարտերի ապահովագրություն» ծառայության մանրամասները, այդ թվում՝ ապահովագրական հատուցումների ստացման կարգն ու պայմանները սահմանվում են Բանկի [«Քարտերի ապահովագրության պայմաններով»](#):

5. Քարտային հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթերն են՝

a. ՀՀ քաղաքացի ռեզիդենտ ֆիզիկական անձանց դեպքում անձը հաստատող փաստաթուղթ, հանրային ծառայության համարանիշ/հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք:

b. ՀՀ քաղաքացի ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց դեպքում անձը հաստատող փաստաթուղթ:

c. Ոչ ՀՀ քաղաքացի ռեզիդենտ ֆիզիկական անձանց դեպքում անձը հաստատող փաստաթուղթ, հանրային ծառայության համարանիշ/հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք, կոմունալ վճարման անդորրագիր, բնակության վայրից տեղեկանք կամ համարժեք այլ փաստաթուղթ, որտեղ արտացոլված է ֆիզիկական անձի գրանցման/փաստացի բնակության հասցեն:

d. Ոչ ՀՀ քաղաքացի ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց դեպքում անձը հաստատող փաստաթուղթ, կոմունալ վճարման անդորրագիր, բնակության վայրից տեղեկանք կամ համարժեք այլ փաստաթուղթ, որտեղ արտացոլված է ֆիզիկական անձի գրանցման/փաստացի բնակության հասցեն:

6. Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է սպառողից «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ սպառողին (նման պահանջի առկայության դեպքում):

7. Քարտային հաշվի բացման համար անհրաժեշտ լրացուցիչ փաստաթղթերին և տեղեկություններին կարող էք ծանոթանալ [այստեղ](#):

8. Բանկի կողմից կնքված պայմանագրերը, համաձայնագրերը, համագործակցությունները, կամ անդամակցությունները ուղղակի ազդեցություն կարող են ունենալ հաճախորդների հաշիվների բացման և սպասարման վրա (օրինակ՝ «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի» (Foreign Account Tax

Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն ֆինանսական կազմակերպությունը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում»):

9. Հաշվի քաղվածքը Բանկը տրամադրում է հաճախորդին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և/կամ Հաճախորդի հետ համաձայնեցված պարբերականությամբ և հաղորդակցման եղանակով: «ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՍ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՅՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍՆԱԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՄՍԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ»:
10. Քաղվածքը համարվում է Քարտապանի կողմից ընդունված, եթե քաղվածքի ամսաթվից 30 (երեսուն) օրվա ընթացքում Քարտապանը չի ներկայացնում առարկություններ քաղվածքի վերաբերյալ:
11. Հաճախորդի՝ Բանկում ունեցած հաշիվներին առկա միջոցները տնօրինելու Հաճախորդի իրավունքը չի կարող սահմանափակվել, բացառությամբ դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կողմից ներկայացված հայտերի հիման վրա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվում առկա միջոցների նկատմամբ սահմանափակում կիրառվելու (արգելադրվելու), հաշվով գործառնությունները դադարեցվելու դեպքում, ինչպես նաև պայմանագրային հարաբերություններ սահմանող փաստաթղթերով, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:
12. Առանց հաճախորդի կարգադրության՝ հաշվում եղած դրամական միջոցները թույլատրվում է բռնագանձել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված գրության/հայտի հիման վրա, ինչպես նաև հաճախորդի հետ կնքված պայմանագրերով սահմանված կարգով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:
13. Բանկի հեռավար եղանակով սպասարկման պայմանները ներկայացված են [Ֆիզիկական անձանց բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմանների](#) 3-րդ ենթաբաժնում:
14. Բանկային, այդ թվում քարտային, հաշվում առկա դրամական միջոցների մնացորդի հատուցման երաշխավորող է հանդիսանում Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը՝ «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն (գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, 0010 Խորենացի 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն):
15. Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ Բանկում բացված հաշվարկային, ընթացիկ, ժամկետային, խնայողական, քարտային կամ այլ հաշվի վրա գտնվող դրամական միջոցները համարվում են բանկային ավանդ:
16. Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են՝
 - միայն ՀՀ դրամով ավանդի առկայության դեպքում՝ երաշխավորված գումարի չափը կազմում է 16 մլն ՀՀ դրամ,
 - միայն արտարժույթային ավանդի առկայության դեպքում՝ երաշխավորված գումարի չափը կազմում է 7 մլն ՀՀ դրամ,
 - եթե հաշվետերը ունի դրամային և արտարժույթային ավանդներ, և դրամային ավանդի գումարը 7 մլն ՀՀ դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդի գումարը՝ մինչև 16 մլն ՀՀ դրամի չափով,
 - եթե հաճախորդը ունի դրամային և արժույթային ավանդներ, և դրամային ավանդի գումարը պակաս է 7 մլն ՀՀ դրամից, ապա երաշխավորվում է դրամային ավանդը՝ ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ 7 մլն դրամի և հատուցված/հատուցվելիք դրամային ավանդի տարբերության չափով:Ընդ որում Բանկում առկա բոլոր
 - դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ,
 - արտարժույթային ավանդները համարվում են մեկ ավանդ
17. Քարտի այլ դրույթները, որոնք սահմանված չեն սույն տեղեկատվական ամփոփագրում, կարգավորվում են Վճարային քարտերի սպասարկման պայմաններով, Բանկի հիմնական պայմաններով, Բանկի սակագներով, Բանկի և Քարտապանի միջև պայմանագրային հարաբերություններ սահմանող փաստաթղթերով և ՀՀ օրենսդրությամբ, իսկ ՀՀ օրենսդրությամբ կարգավորված չլինելու դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներով:
18. Բանկի սպասարկման ցանցին, մասնաճյուղերի հասցեներին և աշխատանքային ժամերին կարող էք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ [Սպասարկման ցանց](#):
19. Կողմերի միջև ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

Հայտարարություն` ֆիզիկական անձը հնարավորություն ունի ներկայացնելու ֆինանսական կազմակերպության և սպառողի միջև կնքվող գործարքից բխող պահանջները **Ֆինանսական համակարգի հաշտարարին:** «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ կնքել է համաձայնագիր, որը տարածվում է միայն այն պահանջների վրա, որոնց գույքային պահանջի չափը չի գերազանցում 250.000 ՀՀ դրամ կամ դրան համարժեք արտարժույթը և գործարքի գումարի չափը չի գերազանցում 500.000 ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը:

20. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ` «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ և ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է»: Կայքի հղումն է www.fininfo.am: